# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

34ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 23 (1673) ՇԱԲԱԹ, ՅՈՒՆԻՍ 21, 2014
VOLUME 34, NO. 23 (1673) SATURDAY, JUNE 21, 2014

MASSIS Weekly
1060 N Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## «ԼՂ Խնդիրը Պէտք Է Լուծուի Բացառապէս Մինսկի Խումբի Կողմէ Առաջարկուած 3 Սկզբունքի Հիման Վրայ». Ջոն Հեֆերն

Հայաստանի մօտ Միացեալ Նահանգներու արտակարգ եւ լիազօր դեսպան Ջոն Հեֆերն անդրադառնալով «Հանրային» հեռուստաընկերութեան «Հարցազրոյց» ծրագրէն ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի տուած հարցազրոյցին, ուր ան նշած էր, թէ Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ ընթացող բանակցութիւնները դանդաղումը պայմանաւորուած է անով, որ ԵԱՀԿ Մինսկի Խումբի համանախագահները եւ Հայաստանը նոյն կերպ կը մեկնաբանեն համանախագահներու կողմէ առաջարկուած սկզբունքները, իսկ Ատրպէյճանը՝ այլ, ըսաւ. «Մինսկի Խումբի կողմէ առաջ քաշուած սկզբունքները կը բխին միջազգային իրաւունքի սկզբունքներէն, եւ միանգամայն յստակ է, որ որեւէ համաձայնութիւն պէտք է բխի այդ երեք սկզբունքներէն՝ տարածքային ամբողջականութիւն, ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառում եւ ինքնորոշում: Յաջողուած բանակցային համաձայնութեան հիմքին պէտք է այս երեք սկզբունքները ներառուած ըլլան: Այս է Մինսկի Խումբի դիրքորոշումը, ԱՄՆ-ի դիրքորոշումը եւ կողմերը այս մասին տեղեակ են»:



Միացեալ Նահանգներու դեսպան Ջոն Հեֆերն

Անդրադառնալով Սերժ Սարգսեանի դիտարկմանը, թէ ԼՂ հարցի խնդիրի լուծման հարցով ջանքերու աւելացման խնդիր կայ, Ջոն Հեֆերնը ըսաւ, որ համանախագահները եռանդագին կ՛աշխատին, որու ապացոյցն է նաեւ այն, որ վերջին մի քանի ամիսներու ընթացքում երկու երկիրներու արտաքին գործոց նախարարներուն հետ շուրջ 10 հանդիպում տեղի ունեցած է:

Միւս կողմէ, Պաքուի մօտ Միացեալ Նահանգներու դեսպան Ռիչըրտ Մորնինկսթար ըսած է որ, իր երկիրը կ՛ակնկալէ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներու միջեւ հանդիպում: «Մինսկի Խումբը գոհ էր, որ Նոյեմբերին նախագահներու միջեւ հանդիպում տեղի ունեցաւ: Յուսով ենք որ նոր հանդիպում տեղի կ՛ունենայ նախագահներուն միջեւ յառաջիկայ 1-2 ամիսներու ընթացքին՝ Փարիզի մէջ: Մինսկի Խումբի ամերիկացի համանախագահ Ջէյմս Ուորլիք կոչ ըրած էր, որ ընդունին Ֆրանսայի նախագահ Օլանդի հրաւէրը, ինչ որ փաստօրէն ըրած են նաեւ միւս համանախագահները»,- ըսած է ան շեշտելով, որ համանախագահները կ՛ընեն ամէն ինչ, որ նպաստեն խնդրի խաղաղ կարգաւորման, սակայն այն ինչը կը որոշեն բանակցային գործընթացի ելքը, կողմերու քաղաքական կամքն է:

Գերմանական APA լրատուական գործակալութեան համաձայն, նշելով, որ այդ հանդիպման ստոյգ օրը տակաւին յայտնի չէ, Մորնինկսթար ըսած է. - «ԱՄՆ կը կարծէ, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահները պէտք է յստակ համաձայնութեան գան հակամարտութեան կարգաւորման հարցով»:

## Սերժ Սարգսեան Հարցազրոյց Տալով Պատասխանեց իր Ընդդիմախօսներուն



Սերժ Սարգսեան «Հանրային» հեռատեսիլի վրայ ունեցած հարցազրոյցի ընթացքին

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը հարցազրոյց տուաւ Հանրային հեռուստաընկերութեան եւ մօտ 40 վայրկեան տեւած հարց ու պատասխանի ընթացքին անդրադարձաւ Եւրասիական Միութեան մէջ Հայաստանի ապագային, երկրի ապահովութեան հարցերուն, ընդդիմութեան պահանջներուն, եւ նոյնիսկ՝ ֆութպոլի աշխարհի բաժակին վերաբերեալ հարցերուն:

«Այո, Հայաստանի Հանրապետութիւնը անդամակցելու է Մաքսային Միութեանը իր իսկ կողմից ճանաչած սահմաններով՝ այնպէս, ինչպէս Հայաստանի Հանրապետութիւնը այս 20, 22 տարիների, 23 տարիների ընթացքում անդամակցել է մնացած բոլոր միջազգային կառոյցներին: Որեւէ մէկը կա՞յ, որ էստեղ հարց առաջացնի կամ ասի՝ էս մօտեցումը սխալ է: Վստահ եմ, որ ոչ», - ըսաւ Սերժ Սարգսեան:

«Ճշմարտութիւն է նաեւ այն, որ Հայաստանի Հանրապետութիւնը ունի առանձնայատուկ յարաբերութիւններ, ուղիղ ասեմ՝ երկրորդ հայկական հանրապետութեան հետ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հետ, եւ կասկածի տակ առնել այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը անկախ պետութիւն է, սխալ է», - շարունակեց նախագահը՝ միաժամանակ նշելով. - «Այո, որոշակի եւ շատ յստակ նկատառումներից ելնելով՝ մենք չենք ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անկախութիւնը»:

Սարգսեանը աւելցուց, որ օգտուելով առիթէն՝ կը խնդրէ իր

Շար.ը էջ 4

## 250 Ընտանիք Արդէն Իսկ Վերադարձած Են Քեսապ

Սուրիական կառավարութեան կարողացած են վերագրաւել Քեսապը եւ շրջակայ գիւղերը: քաղաքապետ Վազգէն Չաբրիեան տեղեկացուցած է, որ 250 ընտանիք արդէն վերադարձած են Քեսապ, իսկ մնացած փախստականները կը սպասեն ենթակառուցուածքներու վերանորոգման, որպէսզի վերադառնան իրենց տուները: Քաղաքի բնակիչներու անունով ան ջերմ երախտագիտութիւն յայտնած է Սուրիոյ բանակին՝ քաղաքի եւ ամբողջ երկրի տարածքին կայունութիւն եւ ապահովելու ջանքերու համար, կը հաղորդէ սուրիական պետական տեղեկատուական «ՍԱՆԱ» գործակալութիւնը:

Լաթաքիա նահանգի պատասխանատուները, որուն մաս կը կազմէ Քեսապը, վստահեցուցած են որ հիմնական ծառայութիւններու տրամադրումը քաղաքին կը վերականգնուի երեք օրուայ ընթացքին:

Նահանգապետ Ահմատ Շէյխ-Քատեր քաղաքի բոլոր ծառայութիւնները կեդրոնացած են ենթակառուցուածքներու վերակառուցումը արագացնելու համար: Պաշտօնական պատուիրակութեան ընկերակցութեամբ Քեսապ կատարած այցի ընթացքին նահանգապետը ստուգած է քաղաքի թաղամասերը եւ գնահատած վնասի մասշտաբները:

Որոշ տեղեկութիւններու համաձայն «Ալ Նուսրա» ճակատի զինեալները, որոնք կը գրաւէին Քեսապը հեռացած են դէպի Թրքական սահմանի միւս կողմը:

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՄԵԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100 ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆՑ

Այսու կը ծանուցանենք մեր ժողովրդեան Հայոց Մեծ Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի ոգեկոչման միջոցառմանց մասին՝ կազմակերպութեամբ ԱՄՆ Արեւմտեան Ափի «100 Ամեակի Միացեալ Յանձնախումբ»-ին:

-14 Ապրիլ, 2015 . Միջեկեղեցական մասնաւոր արարողութիւն Հռոմէական Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ՝ մասնակցութեամբ տարբեր եկեղեցիներու եւ կրօնական յարանուանութեանց ներկայացուցիչներու եւ Լոս Անճըլէսի քաղաքապետարանի պաշտօնէութեան:

– 23 Ապրիլ, 2015 – Սուրբ եւ Անմահ Պատարագ պիտի մատուցուի Առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ՝ մասնակցութեամբ բոլոր հայյարանուանութեանց:

– 24 Ապրիլ, 2015 – Համահայկական քայլարշաւ եւ բողոքի երթ:

-Մեծ Ցեղասպանութեան անմեղ զոհերու յիշատակին նուիրուած յուշակոթողի պաշտօնական բացում Լոս Անճըլէսի վարչական շրջանին մէջ:

Հանեցէք նկատի առնել, որ ասոնք «100 Ամեակի Միացեալ Յանձնախումբ»-ի նախաձեռնած համայնքային մեծածաւալ ձեռնարկներն են, եւ հետեւաբար՝ կ՛ակնկալենք խուռներամ մասնակցութիւն: Վերոյիշեալի մասին մանրամասները կը հրապարակենք աւելի ուշ:

Յառաջիկային, երկրորդ հաղորդագրութեամբ մը կը տեղեկացնենք նաեւ շրջաններու մէջ կազմակերպուող կարեւորագոյն ձեռնարկներու մասին:

**100 ԱՄԵԱԿԻ ՄԻԱՑԵԱԼ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ**

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Իմ 13 պահանջները իշխանութիւններից

*ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*

Նախորդ շաբաթ ոչ իշխանական քառեակի պահանջները, իմ կարծիքով, բաւականաչափ ռադիկալ չէին, եւ ես կը փորձեմ լրացնել այդ բացը՝ հարցին մօտենալով աւելի ամբողջական ձեւով:

1. Մինչեւ Սեպտեմբերի 1-ը հասնել Ատրպէյճանի ամբողջական եւ լիակատար կապիտուլիացիային եւ նրա կողմից ԼՂՀ ճանաչմանը: Յետագայ երկու ամսում բանակցութիւններ վարել Ատրպէյճանի կազմում մնացած տարածքները վերադարձնելու մասին:

2. Մինչեւ Սեպտեմբերի 1-ը ՀՀ-ին միացնել Արեւմտեան Հայաստանը եւ բանակցութիւններ սկսել Կիլիկեան Հայկական անկլաւի մասին:

3. Մինչեւ Սեպտեմբերի 1-ը առնուազն եռապատկել ՀՀ բնակչութիւնը:

4. Առնուազն 40 անգամ բարձրացնել աշխատավարձերը:

5. Համոզել Հայաստանի կովերին, որ նրանք առնուազն երկու անգամ աւելի շատ կաթ տան:

6. Վերացնել կարմիր գծերը, տեսախցիկները, արագաչափերը եւ լուսաֆորները՝ որպէս հայաստանցիների արտագաղթի հիմնական պատճառ:

7. Երեւանի քաղաքային տրանսպորտում երթեւեկութիւնը, էլեկտրաէներգիան եւ գազը դարձնել անվճար:

8. Վերացնել հարկերը՝ դրա փոխարէն ամիսը մի անգամ հարուստներից խլել իրենց հարստութիւնները, դրանք կճուճների տեսքով դնել Ազատութեան հրապարակում եւ հնարաւորութիւն տալ ցանկացողներին վերցնել՝ ով որքան ուզում է:

9. Արգելել սուպերմարկետները, ամբողջ ապրանքը վաճառել միայն սեղանիկների վրայ:

10. Թոյլատրել ընդդիմադիրներին ճայթուկներով երթերը, եթէ դրանք արդար նպատակներ են հետապնդում:

11. Թոյլատրել ընդդիմութեան համակիրներին կրակել ոստիկանների վրայ, եթէ դա քաղաքական բողոքի ձեւ է:

12. Մինչեւ Սեպտեմբերի 1-ը Հայաստանը մտցնել Ռուսաստանի կազմի մէջ եւ խնդրել Վլադիմիր Վլադիմիրովիչին, որ նա նահանգապետ նշանակի ժողովրդի մասին մտածող մարդու:

13. Դիւանագիտական ճանապարհով ապահովել Հայաստանի ֆուտպոլի հաւաքականի մասնակցութիւնը Պրազիլիայում ընթացող աշխարհի առաջնութեանը եւ հասնել նրան, որ մեր թիմը աշխարհի ախոյեան դառնայ:

Եթէ մինչեւ Սեպտեմբերի 1-ը իմ 13 պահանջները չկատարուեն, ես գրելու եմ եւս մի յօդուած, որում կ'ամփոփեմ իմ պահանջների կատարումը:

«ԱՌԱՒՕՏ»

# Մարտի 1-ը ստիպուած ու պարտադրուած յիշելով

*ԹԱՄԱՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ*

Այնպէս է ստացուել, որ տարին մէկ-երկու անգամ օտարերկրեայ պաշտօնեաների կողմից Մարտի 1-ի արծարծմամբ հայ հասարակութիւնը վերյիշում է Մարտի 1-ի ողբերգութեան մասին, դրա բացայայտման անհրաժեշտութեան եւ պատասխանատուներին պատժելու մասին:

Մարտի 1-ի սպանութիւնները չբացայայտուած մնալու հարցը Եւրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի Հայաստանի հարցով համազեկուցողները կը քննարկեն խորհրդարանականների, ինչպէս նաեւ նախագահ Սերժ Սարգսեանի հետ: Պատասխանելով «Ազատութեան» այն հարցին, թէ ինչպէ՞ս են գնահատում այն փաստը, որ առ այսօր ոեւէ մէկը պատասխանատուութեան չի ենթարկուել Մարտի 1-ի սպանութիւնների համար, փաստահաւաք առաքելութեամբ Հայաստան ժամանած համազեկուցող Աքսել Ֆիշերը պատասխանել է. «Մենք այդ հարցը քննարկել ենք նաեւ մեր նախորդ այցի ժամանակ, վաղը պատրաստւում ենք այն եւս մէկ անգամ քննարկել խորհրդարանում, ամենայն հաւանականութեամբ նաեւ Հայաստանի նախագահի հետ: Ես կարծում եմ, որ մենք մեր զեկոյցում անդրադարձ կը կատարենք այդ խնդրին»: Ի պատասխան հարցի, թէ իր կարծիքով՝ ինչո՞ւ առ այսօր սպանութիւնների համար պատասխանատու անձանց յայտնաբերելու հարցում իշխանութիւններն այդպէս էլ որեւէ արդիւնքի չեն հասել, Աքսել Ֆիշերը պատասխանեց.- «Մենք այդ հարցը պատրաստւում ենք տալ Հայաստանի խորհրդարանականներին, նաեւ միգուցէ նախագահին»:

Փաստահաւաք առաքելութեամբ Հայաստան ժամանած համազեկուցողներ Աքսել Ֆիշերն ու Ալան Միլը հանդիպել են քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչների եւ իրաւապաշտպան կազմակերպութիւնների անդամների հետ՝ նրանց հետ քննարկելով երկրում տեղի ունեցող քաղաքական զարգացումները, սահմանադրական բարեփոխումներին առնչուող հարցեր, ինչպէս նաեւ ոստիկանութեան եւ արդարադատութեան ոլորտում իրականացուող բարեփոխումները: Հայաստանի հարցով համազեկուցողին հարց են ուղղել, թէ ինչպէ՞ս են գնահատում ժողովրդավարութեան վիճակը Հայաստանում, եւ մասնաւորապէս, ոստիկանութեան գործելաոճը՝ յատկապէս հաշուի առնելով այն հանգամանքը, որ իրաւապաշտպաններն ու ակտիւիստները բազմիցս են բարձրաձայնում բաժանմունքներում եւ ոստիկանական մեքենաներում տեղի ունեցող ծեծի եւ կտտանքների մասին: Ֆիշերն ասել է, թէ այս պահին որեւէ գնահատական տալ չի կարող, այս փուլում իրենք լսելու են բոլոր կողմերին, որից յետոյ վերադառնալու են Ստրասբուրգ եւ իրենց հաւաքած փաստերը քննարկելու են նախ Եւրոպայի խորհրդի Մոնիտորինգի յանձնաժողովում, ապա եւ այս ամսուայ վերջին կայանալիք ԵԽԽՎ-ի յունիսեան նստաշրջանի լիագումար նիստում, որտեղ էլ կը ներկայացնեն իրենց զեկոյցը:

Տարեսկզբին մարտի մէկեան իրադարձութիւնների ուսումնասիրման խորհրդարանական յանձնաժողով ստեղծելու նախաձեռնութեամբ էր հանդէս եկել ՀԱԿ-ը, որի նախագիծը գրեթէ չէր տարբերւում նախորդից, որը խորհրդարանական մեծամասնութիւնը տապալել էր աւելի վաղ: Տարեսկզբին ՀԱԿ պատգամաւոր, Գլխաւոր դատախազի նախկին տեղակալ Գագիկ Ջհանգիրեանը նշել էր, թէ այդ հարցը կրկին առաջ քաշելով նպատակ ունեն պարզել, թէ «Մարտի 1-ի բացայայտմանն ուղղուած ինչ քայլեր են ձեռնարկում Գլխաւոր դատախազութեան ու Յատուկ քննչական ծառայութեան նոր ղեկավարները: «Փոխուել է ՀՔԾ պետը, փոխուել է Գլխաւոր դատախազը, արդէն 4-5 ամիս է, եւ կարելի էր ենթադրել, որ այդ անձինք պէտք է վերանայած լինէին նախորդ

Շար.ը էջ 18

# Սերժ Սարգսեանի ժամկէտն աւարտուեց

*ՆԱԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ*

ԵԱՀԿ-ը մտադիր է ուժեղացնել մանդատը Ղարաբաղում, ռուսներին թոյլ չտալու համար:

Աստանայում տեղի ունեցած Եւրասիական Միութեան տխրահռչակ վեհաժողովից երկու շաբաթ է անցել, իսկ Հայաստանի մուտքն այդ կազմակերպութիւն աւելի ու աւելի հիպոթետիկ է դառնում: Երկու շաբաթը Սերժ Սարգսեանի ժամկէտն է, իսկ Նազարբաեւը թայմ-աութ է վերցրել մինչեւ ամսուայ վերջ՝ թերեւս ժամանակ թողնելով զուգահեռ դիւանագիտութեան համար:

Ռուսաստանի արտգործնախարար Սերգէյ Լաւրովը կը մեկնի Պաքու՝ Ատրպէյճանին Եւրասիական Միութիւն հրաւիրելու: Ատրպէյճանի մուտքի հաւանականութիւնը մեծ չէ, սակայն Ռուսաստանին հիմա միայն խոստումն է պէտք (ինչպէս Ջինաստանի դէպքում): Այդպիսի խոստում Ալիեւը կարող է տալ, եւ այդ դէպքում Հայաստանի Եւրասիական Միութիւն մտնելու շանսերը կը հաւասարուեն զրոյի:

Դա, սակայն, պայմանաւորուած կը լինի ոչ միայն Ատրպէյճանի մուտքով (խոստումով), այլ նաեւ Թիւրքական Ղազախստանի նախագահի՝ Հայաստանի ու Ղարաբաղի սահմանին իր սահմանապահներին տեղակայելու մտադրութեամբ: Հայաստանը կտրականապէս մերժել է այդ տարբերակը, եւ այժմ քննարկուելու է սահմանին միայն ռուսական ուժեր տեղակայելու հարցը՝ առանց թիւրքական մասնակցութեան:

Հայաստանի քաղաքական ուժերի միջեւ հաւանաբար արդէն փոխզիջում է ձեռք բերուել: Նրանք բաց ռեժիմով շարունակում են յայտարարել Եւրասիական միութիւն մտնելու մտադրութեան մասին, սակայն իրականում գործ են ունենում միայն Ռուսաստանի հետ: Ամենաանկեղծը, ինչպէս միշտ, Գագիկ Ծառուկեանն էր: Նա ասել է, որ Եւրասիական Միութիւնը երկրորդական է, մենք պէտք է մտածենք տնտեսութեան եւ Ռուսաստանի հետ երկկողմ յարաբերութիւնների զարգացման մասին: Թերեւս, սա էլ Հայաստանի նոր քաղաքականութիւնն է՝ դադարեցնել ընթացքը դէպի Եւրասիական Միութիւն եւ զարգացնել Մոսկուայի հետ երկկողմ յարաբերութիւնները:

Հաւանաբար է, դա է քննարկուելու Յունիսի 22-23-ին Սերգէյ Լաւրովի Երեւան այցի ժամանակ: Ստանալով Եւրասիական Միութիւն Ատրպէյճանի մտնելու «խոստումը»՝ Լաւրովը, հաւանաբար, Երեւանին առաւել սերտ յարաբերութիւններ կ'առաջարկի Ռուսաստանի հետ՝ ներառեալ զօրքերի մուտքը:

ԱՄՆ-ը եւ Եւրոպան ջանքեր են գործադրում, որպէսզի թոյլ չտալ Հայաստանի ու Ռուսաստանի էլ աւելի շատ ռազմական մերձեցումը, աւելի պարզ ասած՝ Հայաստանի ու Ղարաբաղի բռնակցումը Ռուսաստանի կողմից: ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի ու ֆրանսիացի համանախագահները, ինչպէս նաեւ Հայաստանի պաշտպանութեան նախարարը միաձայն խօսում են ղարաբաղեան կարգաւորման հարցում ԵԱՀԿ գրասենեակի հնարաւորութիւնների ու մանդատի ընդլայնման մասին: Ատրպէյճանն ու Ռուսաստանը դէմ են, որովհետեւ եթէ Ղարաբաղում ուժեղանայ ԵԱՀԿ ներկայութիւնը, Ռուսաստանի համար բարդ կը լինի այնտեղ զօրքեր մտցնել եւ Հայաստանի ու Ղարաբաղի սահմանին ՀԱՊԿ սահմանապահ զօրքեր տեղակայել:

ԱՄՆ-ը եւ Եւրոպան պնդում են Հայաստանի ու Ատրպէյճանի նախագահների հանդիպման վրայ, որտեղ կարող են պայմանաւորուել ԵԱՀԿ մանդատի ուժեղացման շուրջ: Ռուսաստանն ու Ատրպէյճանը, սակայն, չեն նպաստում հանդիպմանը: Արդիւնքում դա կարող է հանգեցնել նրան, որ ԵԱՀԿ-ն այդ որոշումն ինքնուրոյն կ'ընդունի, եւ այն տեղի կ'ունենայ, եթէ տարածաշրջան ռուսական «խաղաղարարների» մուտքի իրական սպառնալիք առաջանայ:

«ԼՐԱԳԻՐ»

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## «Կառավարութիւնը Քառեակի 12 Պահանջներից եւ Ոչ Մէկն էլ Չի Ընդունելու». Դաւիթ Յարութիւնեան

ՀՀ Ազգային ժողովի չորս ոչ իշխանական ուժերի հրապարակած 12 պահանջներից եւ ոչ մէկը կառավարութիւնը չի պատրաստւում ընդունել: Այս մասին NEWS.am-ի հետ զրոյցում ասաց կառավարութեան աշխատակազմի ղեկավար-նախարար Դաւիթ Յարութիւնեանը:


Կառավարութեան աշխատակազմի ղեկավար-նախարար Դաւիթ Յարութիւնեան

«Եթէ բացարձակապէս այն տեսքով լինի, ինչ-որ ներկայացրեց քառեակը, ապա ոչ մի կէտն էլ չենք ընդունելու, սակայն շատ կէտեր ուղղութեան առումով կարող են համապատասխանել մեր որդեգրած քաղաքականութեանը, սակայն ուղղութեան առումով զուտ»,- ասաց նա:

Դաւիթ Յարութիւնեանի խօսքով՝ կառավարութիւնն ունի իր օրակարգը եւ դրանով շարժւում է առաջ: Մեր դիտարկմանը, թէ ՀՀԿ մամուլի քարտուղար, ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովի պնդմամբ՝ պահանջների մէջ կան պոպուլիստական կէտեր՝ նախարարը նշեց, որ չի ցանկանում առանձին անդրադառնալ այդ կէտերին:

Նշենք, որ քառեակն իր կէտերը հրապարակել է Յունիսի 10-ին եւ ժամանակ տուել իշխանութիւններին՝ իրենց պահանջները կատարելու համար:

Այդ կէտերը վերաբերւում են կուտակային կենսաթոշակային համակարգին, շրջանառութեան հարկին, կարմիր գծանշումներին, գիւղմթերքի արտադրութեանը, «Նաիրիտ» գործարանին, «Որոտան» ՀԷԿ-երի համալիրի գոյքի վաճառքին, տրանսպորտի թանկացմանը, 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգին:

## ՀԱԿ. «Քառեակի Միակ Սխալը Սերժ Սարգսեանի Հրաժարականը Չպահանջելն է»

Միակ սխալը, որ քառեակն արել է, այն է, որ չի պահանջել Սերժ Սարգսեանի հրաժարականը. այսպէս արձագանքեց քառեակի անդամ, Հայ Ազգային Կոնգրէս (ՀԱԿ) խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը Սերժ Սարգսեանի հնչեցրած այն գնահատականին, թէ քառեակը իշխանութեանը 12 պահանջներ ներկայացնելիս շարադրական սխալներ է կատարել:

«Այդ փաստաթուղթ կազմողները ամենայն հաւանականութեամբ մի քիչ շտապողականութիւն են ցուցաբերել եւ որոշակի լեզուաշարադրական բացթողումներ են ունեցել, որովհետեւ եթէ նպատակը համագործակցութիւնն է, ապա այդպիսի փաստաթղթերից պէտք է բացառուեն «պահանջում ենք», «պարտադրում ենք» բառերը»,- Հանրային Հեռուստաընկերութեան «Հարցազրոյց» ծրագրի ընթացքում ասել էր նախագահը:

«Միակ լեզուաշարադրական սխալը, որ քառեակ արել է, այն է, որ Սերժ Սարգսեանի հեռացումը չի պահանջել: Դա էլ կը շտկենք՝ շատ շուտ»,- արձագանքեց Զուրաբեանը:

ՀԱԿ խմբակցութեան քարտուղար Արամ Մանուկեանն էլ հեգնում է, թէ պէտք է այդ 12 «դաժան» պահանջները ետ կանչել, ուղղել սխալը եւ պահանջել բառը փոխարինել «համագործակցել» բառով:

ՀԱԿ խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանի Սերժ Սարգսեանի յայտարարութիւններից եզրայանգել է՝ իրենց պահանջները իշխանութեանը դրել են անյարմար վիճակի մէջ:

«Նրանք հասկանում են, որ աշնանը պէտք է պատասխան տան Ազատութեան հրապարակում հաւաքուած ժողովրդին: Հիստերիկ այս տուայտանքները եւ հակասական յայտարարութիւնները միայն դա են վկայում»,- նշեց Զուրաբեանը:

## «Համագեկուցողներն Ուզում էին, Որ Մենք Մտնենք Սահմանադրական Բարեփոխումների Գործընթացի Մէջ». Ռուբէն Յակոբեան

ԵԽԽՎ համագեկուցողները կարեւորում են Հայաստանում սահմանադրական բարեփոխումների հարցը եւ ուզում են, որ մենք այս գործընթացի մէջ մտնենք: Այս մասին, Յունիսի 17-ին, ԱԺ-ում ԵԽԽՎ համագեկուցողներ Աքսել Ֆիշերի ու Ալան Միլի հետ հանդիպումից յետոյ լրագրողներին յայտնել է «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ռուբէն Յակոբեանը: Նշենք, որ համագեկուցողները հանդիպել են ԱԺ բոլոր 6 խմբակցութիւնների հետ:

«Ես ասացի, որ եթէ այսօր ունենք խնդիրներ՝ կոռուպցիա, ստուեր եւ այլն, Սահմանադրական փոփոխութիւնների կարիքը չկայ, պէտք է ընդամէնը իշխանութիւնները քաղաքական կամք ունենան»,-ասել է Յակոբեանը:

«Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավարի խօսքով՝ համագեկուցողներն անդրադարձել են նաեւ նոյնասեռականների իրաւունքների խնդրին, որի ժամանակ ինքը նշել է, որ պէտք է հաշուի առնել իւրաքանչիւր պետութեան մենթալիտետը, որ դա չպէտք է դառնայ արհեստական ու պարտադրուած:

«Պէտք է նկատի ունենալ՝ ինչ տարածաշրջանում ենք գտնւում եւ ինչ առանձնայատկութիւններ կան, առաւել եւս, որ այնտեղ խօսք կար այլընտրանքային ծառայութեան մասին: Պէտք է հաշուի առնել, որ մենք պատերազմող երկիր ենք, ճիշդ է՝ սառեցուած է, բայց պատերազմական հոգեբանութեան մէջ ենք ապրում եւ այն ստանդարտները, որ կան Եւրոպայում, չպէտք է թաքնուած պարտադրել Հայաստանում»,- ընդգծել է «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավարը:

## «Նախագծի Ընդունումը Կը Նշանակի, Որ Այսքան Ժամանակ Անիմաստ Ենք Պայքարել».

Կուտակային կենսաթոշակների մասին կառավարութեան առաջարկած օրէնքի նոր նախագծում ոչինչ չի փոխուել. պարտադիր կուտակային վճարը դարձել է սոցիալական վճար: Այս մասին Յունիսի 18-ին, լրագրողների հետ զրոյցում ասաց «ԴԷՄ ԵՄ» նախաձեռնութեան անդամ Գէորգ Գորգիսեանը: Նա նշեց, որ չի կարելի ընդունել մի օրինագիծ, որի մասին անգամ ԱԺ պատգամաւորները տեղեակ չեն. սա ցոյց է տալիս, որ այս կառավարութեան գործունէութիւնը նախորդից ոչնչով չի տարբերւում:

«Առաջարկուող փոփոխութիւններով խտրականութիւն է դրւում մարդկանց միջեւ՝ պետական կառոյցների եւ մասնաւոր ընկերութիւնների աշխատողների միջեւ»,- ասաց Գէորգ Գորգիսեանը:

«ԴԷՄ ԵՄ» նախաձեռնութեան անդամ Մանէ Թանդիլեանը նշեց, որ այսօր յատկապէս «զարհուրելի» վիճակի մէջ են պետական համակարգի աշխատողները:

«Մենք բազմաթիւ զանգեր ենք ստանում պետական հիմնարկներից, յատկապէս հիւանդանոցներից եւ դպրոցներից: Բայց մենք չենք կարող նրանց օգնել, մինչեւ իրենք ոտքի չկանգնեն»,- ասաց քաղաքացիական ակտիւիստը:

Սեւակ Ծատուրեանը նշեց, որ իրենք համոզուած են՝ տուեալ օրէնքով կը շարունակուի հարկային բեռի աւելացումը. «Պետական աշխատողներից յետոյ նրանք կը տարածեն այդ օրէնքը նաեւ մասնաւոր սեկտորի վրայ, եւ դա կ՚անեն առանձին-առանձին, որպէսզի բողոքի ալիքն ուժգին չլինի: Նրանք մեր տուած հարկերով աշխատավարձ են ստանում, ու նման օրէնքներ են ընդունում»:

«ԴԷՄ ԵՄ»-ի անդամները նշեցին, որ իրենք չեն պատրաստւում քաղաքականութեան մէջ մտնել, քանի որ դա կը նշանակէր քաղաքական պաշտօնների ակնկալում: Նրանք շարունակելու են մնալ քաղաքացիական շարժում:

«Եթէ յանկարծ կառավարութեան նախագիծը ստանայ օրէնքի ուժ, դա կը նշանակի, որ իրենց այսքան ժամանակուայ պայքարն անիմաստ է եղել: Մենք ամէն ինչի պատրաստ ենք նման բան թոյլ չտալու համար. անգամ կը դիմենք միջազգային ատեաններին»,- ասաց Գէորգ Գորգիսեանը:

## Հայաստանում Երկրորդ Պետական Լեզուի «Պահանջ Չկայ»

Հայաստանի Գրողների Միութեան նախագահ, բանաստեղծ Էդուարդ Միլիտոնեանը մտահոգիչ ու անընդունելի է համարում պետական կառոյցների կողմից «Լեզուի մասին» օրէնքի շարունակական խախտումը:

«Մտահոգում է», - «Ազատութեան» հետ զրոյցում ասաց Միլիտոնեանը: - «Ոչ միայն ինձ պիտի մտահոգի, Լեզուի տեսչութեանը պիտի մտահոգի եւ մեր օրէնսդիր, գործադիր մարմիններին: Դա պաշտօնական հանդիպում լինի, թէ այլ հանդիպում, եթէ օտար մարդը եկել է, իր խօսքը պիտի թարգմանուի: Մենք չմոռանանք, որ պետութիւնում գործում է «Լեզուի մասին» օրէնքը»:

Անցած շաբաթ, յիշեցնենք, Ազգային ժողովում միայն ռուսերէնով անցկացուող միջոցառմանը ռուսաստանեան պետական լրատուական գործակալութեան ղեկավար Դմիտրի Կիսելիովը, ով յայտնի է որպէս Պուտինի վարչակազմի տեսակէտները հանրութեանը ներկայացնող մէկը, խորհրդարանի փոխնախագահ Հերմինէ Նաղդալեանի եւ Հանրապետական պատգամաւորների ներկայութեամբ, հրամայական տոնով պահանջեց Հայաստանում աւելացնել ռուսական դպրոցների թիւը, փոխել «Լեզուի մասին» օրէնքը, այլապէս դա կ՚ազդի անվտանգութեան ոլորտում հայ-ռուսական համագործակցութեան վրայ եւ Հայաստանի անվտանգութիւնը կը տուժի:

Յաջորդ աղմկայարոյց միջադէպը գրանցուեց երբ Մաքսային Միութեանը վերաբերող միջոցառումը, որը կազմակերպել էր Հայաստանի էկոնոմիկայի նախարարութիւնը, դարձեալ անցկացուեց միայն ռուսերէնով, իսկ փոխնախարար Գառնիկ Բադալեանը խորհուրդ տուեց լրագրողներին՝ ««Լեզուի մասին» օրէնքը գնացէք ուրիշ տեղ պաշտպանէք»:

«Մենք պիտի գիտակցենք՝ լեզուն մեր ամենագլխաւոր գործիքն է ժողովրդի ինքնապահպանման, ինքնագիտակցման, աշխարհում քո տեղը ունենալու: Լեզուի վրայ է կառուցւում ամէն ասպարէզ՝ գիտութիւն, մշակոյթը յատկապէս, կրթութիւն եւ այլն: Լեզուն հազարաւոր տարիներ եկել է մեզ ասելու՝ պահպանել եմ քեզ, դու էլ ինձ պահպանիր, եթէ ուզում ես ապրել», - ասաց Գրողների Միութեան նախագահը:

«Կիսելիովների ասածներից զատ, նախեւառաջ մեզնից պէտք է պահանջենք՝ յարգել հայոց լեզուն», - շարունակեց Միլիտոնեանը՝ նշելով, թէ հայաստանեան պետական մարմիններում, լրատուամիջոցներում յաճախ կարելի է հանդիպել աղաւաղուած հայերէնի:

Նա նաեւ անընդունելի է համարում մեր երկրում ռուսերէնը երկրորդ պետական լեզու դարձնելը:

Անցած շաբաթ Ազգային ժողովում Դմիտրի Կիսելյովի մասնակցութեամբ տեղի ունեցած սկանդալային հանդիպմանը ներկայ էր նաեւ մեր երկրում Ռուսաստանի նախկին դեսպան Վյաչեսլաւ Կովալենկոն, ով յայտարարեց, թէ իր համոզմամբ ռուսերէնը պէտք է Հայաստանում լինի երկրորդ պետական լեզուն:

«Երկրորդ պետական լեզու այստեղ չի կարող առաջանալ, որովհետեւ պահանջ չկայ: Պահանջ պիտի լինի: Եթէ Ռուսաստանում կամ որեւէ այլ տեղ կան տարբեր ազգեր ու կարող են այդ հարցը բարձրացնեն, ասեն, բայց Հայաստանում երկրորդ լեզու կարող է մի խումբ ասի՝ անգլերէնը, մի խումբ էլ ասի՝ճապոներէնը... Մեր օրէնքով ինչ կայ, ես պաշտպանում եմ դա: Ես մտածել եմ, որ օրէնքը հաստատել են մարդիկ, որոնք, իմ համոզմամբ, տէրն են եղել», - ասաց Էդուարդ Միլիտոնեանը:

## ԼՈՒՐԵՐ

## Բեռլինում Հանդիպել են Հայաստանի եւ Գերմանիայի ԱԳ Նախարարները




Հայաստանի եւ Գերմանիայի արտաքին գործերի նախարարներ Էդուարդ Նալբանդեանի եւ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայեր

*Յունիս 16-ին Բեռլինում կայացել է Հայաստանի եւ Գերմանիայի արտաքին գործերի նախարարներ Էդուարդ Նալբանդեանի եւ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերի հանդիպումը:*

*Ողջունելով Հայաստանի արտգործնախարարին՝ Գերմանիայի արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարն ասել է, որ ջերմութեամբ է յիշում դեռ 6 տարի առաջ՝ 2008 թուականի Յունիսին իրենց ունեցած առաջին հանդիպումը, գոհունակութիւն է յայտնել երկու երկրների միջեւ հաստատուած բարձր մակարդակի ակտիւ քաղաքական երկխօսութեան կապակցութեամբ եւ ընդգծել, որ Գերմանիան շահագրգռուած է Հայաստանի հետ համագործակցութեան առաւել զարգացմամբ:*

*Նալբանդեանը նշել է, որ վերջին երկու տասնամեակների ընթացքում հայ - գերմանական յարաբերութիւնները կանոնաւոր կերպով զարգացել են, իսկ վերջին շրջանում նոր թափ են ստացել, ինչի վկայութիւն են երկու երկրների միջեւ հաստատուած քաղաքական երկխօսութիւնը, բարձր մակարդակի փոխայցելութիւնները: Նախարարը վստահութիւն է յայտնել, որ համատեղ եւ հետեւողական ջանքերով երկու երկրների միջեւ համագործակցութիւնը հնարաւոր է առաւել խորացնել եւ ընդլայնել: Նալբանդեանը շեշտել է, որ Գերմանիան Եւրոպայում Հայաստանի գլխաւոր տնտեսական գործընկերներից է, շարունական աջակցութիւն է ցուցաբերում Հայաստանի զարգացմանն ուղղուած ծրագրերին:*

*Հայաստանի արտգործնախարարութեան մամուլի եւ տեղեկատուութեան վարչութեան փոխանցմամբ՝ հանդիպման մասնակիցներն ընդգծել են, որ առկայ է շուրջ երեք տասնեակ պայմանագիր եւ համաձայնագիր ներառող ամուր իրաւապայմանագրային դաշտ, զարգանում է գործակցութիւնը միջազգային կազմակերպութիւններում, բարձր մակարդակի վրայ են միջխորհրդարանական շփումները, ընդլայնւում են գործարար կապերը՝ Հայաստանում գործում է գերմանական կապիտալով մօտ 100 ընկերութիւն, ակտիւանում է գիտակրթական եւ մշակութային համագործակցութիւնը: Նրանք նշել են, որ Հայաստանն ու Գերմանիան արդիւնաւէտ համագործակցում են խաղաղապահ գործողութիւնների շրջանակներում, մասնաւորապէս՝ Աֆղանստանում:*

*Հայաստանի եւ Գերմանիայի արտգործնախարարներն անդրադարձել են միջազգային եւ տարածաշրջանային մի շարք խնդիրների՝ Իրանի միջուկային ծրագրի շուրջ ընթացող բանակցութիւններին, Ուկրաինայում տեղի ունեցող զարգացումներին, սիրիական ճգնաժամին, Իրաքում տիրող իրավիճակին:*

*Նալբանդեանը ներկայացրել է Ղարաբաղեան հիմնախնդրի խաղաղ կարգաւորման ուղղութեամբ Հայաստանի եւ միջազգային հանրութեան կողմից ձեռնարկուող ջանքերը:*

*Նախարարներն անդրադարձել են Հայաստան - Եւրոպական Միութիւն յարաբերութիւններին: Ընդգծուել է, որ երկուստեք պատրաստակամութիւն է արտայայտուել շարունակել համապարփակ համագործակցութիւնը բոլոր հնարաւոր ոլորտներում:*

*Հայաստանի եւ Գերմանիայի արտաքին քաղաքական գերատեսչութիւնների ղեկավարները պայմանաւորուել են շարունակել պարբերական հանդիպումները:*

*Նալբանդեանը հրաւիրել է Շտայնմայերին այցելել Հայաստան:*

## Բաքւում Հայկական Պատուիրակութեան Ելոյթները Զայրացրել են Ադրբեջանցիներին



Հայկական պատուիրակութեան անդամները Պաքուի մէջ կայացած սեմինարի ընթացքին

*Բաքւում անցկացուող «Հարաւային Կովկաս. Մարտահրաւէրներ եւ հնարաւորութիւններ» թեմայով ՆԱՏՕ-ի Խորհրդարանական վեհաժողովի «Rose-Roth» 86-րդ սեմինարի երկրորդ օրը հայկական պատուիրակութեան ղեկավար Կորիւն Նահապետեանի ելոյթը զայրացրել է ադրբեջանական կողմին:*

*Կորիւն Նահապետեանը յայտարարել է, որ վերջին 7 տարիների ընթացքում Ադրբեջանի ռազմական բիւջէն աւելացել է 20 անգամ, եւ դա որակել է որպէս տարածաշրջանում իրական վտանգ: Նա պահանջել է կառոյցից այդ առիթով խիստ արձագանք տալ, գրում է apa.az-ը:*

*Նրան հետեւել է Ազգային ժողովի պատգամաւոր Թեւան Պօղոսեանը, ով մեղադրել է Ադրբեջանին Ղարաբաղեան հակամարտութիւնը սկսելու համար: Թեւան Պօղոսեանը յայտարարել է, որ ԽՍՀՄ փլուզումից առաջ Ադրբեջանում մնացել է մեծ քանակութեամբ զէնք եւ զինամթերք եւ պաշտօնական Բաքուն, օգտուելով դրանից, սկսել է սպառնալ Ադրբեջանում բնակուող հայերին:*

*Հայկական պատուիրակութեան անդամների ելոյթները զայրացրել են ադրբեջանական կողմին: Ադրբեջանական պատուիրակութեան ղեկավար՝ Միլի Մեջլիսի նախագահի առաջին տեղակալ Զիեանէթ Ասկերովը յայտարարել է, որ «Հայաստանի պատուիրակութիւնը փորձում է սեւացնել Ադրբեջանին ՆԱՏՕ-ի Խորհրդարանական վեհաժողովի առաջ»:*

*Ինչպէս յայտնել էինք աւելի վաղ, Ադրբեջանը պահանջել է հեռացնել Հայաստանի պատուիրակութեանը ՆԱՏՕ-ի Խորհրդարանական վեհաժողովից:*

## Եւրասիականին Միանալու Պաշտօնական Առաջարկ Ադրբեջանը Չի Ստացել

*Հայաստանը նախկինում էլ յայտարարել է, որ ինտեգրացիոն գործընթացներին մասնակցում է ՄԱԿ-ի կողմից ճանաչուած սահմանների շրջանակներում, նոյնը տեղի կ'ունենայ նաեւ Եւրասիական տնտեսական Միութեան դէպքում: Այդ մասին Բաքւում յայտարարել է Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավար Սերգէյ Լաւրովը:*

*Լաւրովի Ադրբեջան այցի նախօրէին փորձագէտները համոզմունք էին յայտնում, որ այցի հիմնական նպատակն է համոզել Ադրբեջանին՝ միանալ Եւրասիական Միութեանը: Ադրբեջանցի պաշտօնակից Էլմար Մամեդյարովի հետ հանդիպմանը հետեւած ասուլիսի ժամանակ Լաւրովը այս կապակցութեամբ յայտարարել է, որ Եւրասիական Միութեանը միանալու պաշտօնական առաջարկ Ադրբեջանը չի ստացել, սակայն Մոսկուան միշտ ուրախ է, երբ իր գործընկերները Եւրասիական Միութեան հանդէպ հետաքրքրութիւն են դրսեւորում:*

*Ադրբեջանցի գործընկերոջ հետ բանակցութիւնները Ռուսաստանի արտգործնախարարը օգտակար է գնահատել եւ նոյնիսկ յաւելել է, որ ամենաակտիւ շփումները վերջին ժամանակաշրջանում կայացել են հենց ադրբեջանցի պաշտօնեաների հետ:*

*Երկու երկրների արտգործնախարարները քննարկել են եւ՛ երկկողմ յարաբերութիւններին վերաբերող հարցեր, եւ՛ տարածաշրջանային խնդիրներ՝ Սիրիայից մինչեւ Իրան, ինչպէս նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հարցը:*

*Էլմար Մամեդյարովն ասել է, որ սպասում են Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների առաջիկայ հնարաւոր հանդիպման ժամկէտի վերաբերեալ Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի առաջարկին:*

## Սերժ Սարգսեան Պատասխանեց

*Շարունակուած էջ 1-էն*

*քննադատներէն չպաշտպանել Լեռնային Ղարաբաղը իրմէ, քանի որ այդ՝ վիրաւորական եւ անհեթեթ է:*

*Սերժ Սարգսեան նաեւ վստահեցուց, որ Աստանայի մէջ Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարպաեւի յայտարարութիւնը անակնկալի չէր եւ հայկական 10-հոգինոց պատուիրակութիւնը նախօրօք իմացած է Ատրպէյճանի նախագահի նամակի մասին:*

*«Դիւանագիտութիւնը տղայութիւն ընելու տեղ չէ», ըսաւ Հայաստանի նախագահը, հակադարձելով այն քննադատներուն, որոնք զինք կը մեղադրեն Նազարպաեւին չպատասխանելու ու նուաստացուցիչ իրավիճակի մէջ յայտնուելու համար:*

*Անդրադառնալով ընդդիմութեան 12 պահանջներուն Սերժ Սարգսեան յայտնեց, որ ծանօթացած է անոնց ու կարծիքներու բախումն ալ օգտակար կը համարէ: Սակայն աւելցուց, որ պահանջները կազմողները թոյլ տուած են «լեզուաշարադրական բացթողումներ, որովհետեւ եթէ նպատակը համագործակցութիւնն է, ապա այդպիսի փաստաթղթից պէտք է բացառել «պահանջում ենք», «պարտադրում ենք» բառերը»:*

*«Այն հարցերը, որոնք ներառուած են մեր ծրագրերում պէտք է արագ առաջ տանել, մեր ընդդիմադիրներին յայտնենք, թէ այս ուղղութիւններում մինչեւ ուր ենք շարժուելու: Երկրորդ՝ այն հարցերը, որոնք առնչութիւն ունեն սահմանադրական բարեփոխումների հետ, անպայման պէտք է քննարկուեն՝ հեղինակների հետ միասին եւ գան ընդհանուր յայտարարի: Եւ երրորդ՝ այն հարցերը, որոնք, մեր կարծիքով, մեր թիմի կարծիքով, իրատեսական չեն, ապա անպայման պէտք է բացատրել մեր ընդդիմախօսներին, թէ ինչու իրատեսական չեն եւ ինչ հետեւանքներ կարող են բերել, եթէ մենք խնդիրները լուծենք այդ կերպ, ինչ կերպ իրենք են առաջարկում», - ըսաւ Հայաստանի նախագահը:*

*«Նորից եմ կրկնում եւ ես համոզուած եմ, որ կարծիքների այս բախման արդիւնքում մենք կ'ունենանք շատ լաւ որոշումներ», - յայտարարեց Սերժ Սարգսեան:*

# ՍԱՐՖԸ 100 ՀԱԶԱՐ ՏՈԼԱՐ ԵՒՍ ԿԸ ՓՈԽԱՆՑԷ ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԵԱՆ

*Մինչ Սուրիոյ պատերազմական վիճակը կը շարունակուի, նուիրատուներու փաղանգ մը օգնութեան կոչերուն պատասխանած ըլլալով, Սուրիոյ Հայութեան Զօրակցութեան Միացեալ Մարմինը (ՍԱՐՖը) 100,000 տոլար եւս գոյացուց եւ վերջին փոխանցումով Սուրիահայութեան համար փոխանցուած ընդհանուր գումարը հասցուց մէկ միլիոն տոլարի:*

*«Շնորհիւ հոգատար, կարեկցող եւ պատասխանատուութեան բարձր գիտակցութեամբ տոգորուած մեր նուիրաբերող հանրութեան, մենք նուաճեցինք այս հանգրուանը», ըսաւ Զաւէն Խանճեանը, ՍԱՐՖի Գործադիր Մարմնի ատենապետը: Ան աւելցուց, «Կարելի չէ բոլոր նուիրատուներուն առանձնաբար շնորհակալութիւն յայտնել, սակայն այս առիթը կ՚օգտագործենք ողջունելու 5-տոլարէն մինչեւ 25,000 տոլար նուիրած բոլոր ազգակիցները»:*

*Վերջին նուիրատուութիւններու ցանկին մաս կը կազմեն երկու 10,000 տոլար նուէրներ՝ մէկը Եւրոպայէն Հալէպի հանգուցեալ Տոքթ. Իսքէնտէր Քասիսի ընտանեկան պարագաներէն, իսկ միւսը՝ Անահայմ, Քալիֆորնիայ Տոթք. Նուպար Ուզունեանէն:*

*Քեսապի ամբողջական կորուստները տակաւին չեն պարզուած, Հալէպի Նոր Գիւղի շրջանի ռմբակածումներու շարունակութիւնը եւ Իրաքի Մուսուլ քաղաքի հայութեան նոր տեղահանումը, հայութեան դէմ կատարուած այս բռնարարքներու շարունակութիւնը, կը յիշեցնեն հայոց ցեղասպանութենէն ճողոպրած մեր ժողովուրդի շարունակուող պայքարը:*

*Դժուար է ականատես ըլլալ Մայր Գաղութի քանդումին, հայոց ցեղասպանութեան հարիւրամեակի սեմին: Որպէս սփիւռքեան գաղութ, որ շատ հեռու կը գտնուի տագնապահար Սուրիահայութեան ֆիզիքապէս օգնութիւն հասցնելէ, մեզի հոգեկան հրճուանք կը պատճառէ երբ լսենք քաջութիւնն ու լաւատեսութիւնը պատսպարաններէ ներս ապաստան գտած մեր հայրենակիցներուն: Մեր գաղութը պէտք է շարունակէ իր բաժինը բերել տագնապին քաղաքական լուծումներ գտնելու հոլովոյթին, մինչ այդ մեր հաւաքական նիւթա-բարոյական օժանդակութիւնը անպայման պիտի նպաստէ Սուրիահայութեան գոյատեւումի պայքարին:*

*Բոլոր նուիրատուներուն վարձքը կատար: Կը խնդրենք որ շարունակէք ձեր ստացած օրհնութիւնները բաժնել մեր Սուրիահայ քոյրերուն եւ եղբայրներուն հետ: Ձեր տուրքէ զերծ նուիրատուութիւնները կրնաք ղրկել ՍԱՐՖի հասցէով՝ Syrian Armenian Relief Fund, P.O. Box 1948, Glendale, CA 91209-1948; կամ կայքէջով www.SyrianArmenianReliefFund.org հասցէով:*

***

*Սուրիոյ Հայութեան Զօրակցութեան Միացեալ Մարմինը կազմուած է Օգոստոս 2012ին հետեւեալ անդամներով.- Հայ Առաքելական Եկեղեցւոյ Ա.Մ.Ն.ի Արեւմտեան Թեմ, Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմ, Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութիւն, Հիւսիսային Ամերիկայի Հայ Կաթողիկէ Թեմ, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւն, Հայ Օգնութեան Միութեան Ա.Մ.Ն.ի Արեւմտեան Շրջան, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն, Ռամկավար Ազատական Կուսակցութիւն եւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն:*

# ԶԱՒԷՆ ԽԱՆՃԵԱՆ ԵՒ ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆՍ ՄԷՋ



**Ձախէն աջ՝ Զ. Խանճեան, Տօքթ. Ա. Գազանճեան, Տօքթ. Հ. Ճէպէճեան եւ Գ. Մոլոյեան**

*Երեքշաբթի 17 Յունիս, 2014, կէսօրէ ետք ժամը 4.30-ին, նախօրօք առնուած ժամադրութեամբ, «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնս այցելեցին ազգային հասարակական վաստակաշատ գործիչ եւ գրող՝ Տիար Զաւէն Խանճեան, ընկերակցութեամբ, օրկանիս աշխատակից, կիպրահայ ծանօթ հրապարակագիր՝ Տօքթ. Հրայր Ճէպէճեանի, որ հիւրաբար կը գտնուէր Լոս Անճելոս:*

*Սիրալիր ու ջերմ մթնոլորտի մէջ կարծիքներու փոխանակումները ընդգրկեցին մեր ժողովուրդի դիմագրաւած ազգային, ընկերային, կրթական, հայապահպանման եւ պահանջատիրական ընդհանրական բնոյթի մարտահրաւէրները ազգային միասնական ոգիով դիմագրաւելու հրամայականը, խօսքն ու մաղթանքները գործնականի վերածելով: Այս առումով, նոյնպէս, ընդգծուեցաւ ազգային մամլոյ դերը, որ կոչուած է մնայուն կերպով ընդհարացնելու ազգային միասնութեան գաղափարախօսութիւնը, որ մեր ժողովուրդի բացարձակ մեծամասնութեան ցանկութիւնն ու երազն է:*

*Աւելի քան ժամ ու կէս տեւող հանդիպումը իր լրումին հասաւ հոգեկան խորը գոհունակութեամբ եւ փոխադարձուած ջերմ բարեմաղթութիւններով:*

# ԹՈՒՐՔԵՐԸ 1915-ի ՄԱՍԻՆ ՖԻԼՄ ՊԻՏԻ ՆԿԱՐԱՀԱՆԵՆ

*Թուրքիան 1915թ.-ի դէպքերի հարիւրամեակին ընդառաջ կարեւոր քայլ է նախաձեռնում, գրում է CNN Turk-ը:*

*Հոլիվուտեան դերասանուհի Բեյթ Ուինսլեթի մասնակցութեամբ նկարահանուելու է «Իմ հոգու դատարկութիւնը» ֆիլմը, որտեղ հայերից բացի՝ նաեւ թուրքերի եւ քրտերի վերապրածն է երեւալու:*

*Պարբերականը գրում է, որ «1915թ.-ի դէպքերի 100-րդ տարելիցին» ընդառաջ առաջին քայլն արել էր Թուրքիոյ վարչապետ Ռեճեփ Թայիփ Էրտողանը՝ առաջին անգամ ցաւակցելով զոհուած հայերի ժառանգներին: Յիշեցնենք, որ իր խօսքում Էրտողանը 20-րդ դարասկզբի իրադարձութիւնների հետեւանքով կեանքից զրկուած հայերի հոգիներին հանգստութիւն էր մաղթել, իսկ նրանց թոռներին էլ ցաւակցութիւն յայտնել:*

*Անքարան, սակայն, այդ քայլով բաւարարուել չի պատրաստւում:*

*Նկարահանուելիք ֆիլմի հիմքում Առաջին համաշխարհային պատերազմի ֆոնին տեղի ունեցող սիրավէպն է:*

*Սիրավէպի հերոսներից մէկը հայ բուժքոյր է, որի կերպարը մարմնաւորելու է Բեյթ Ուինսլեթը: Նրա զուգընկերոջ դերի ամենահաւանական թեկնածուն հոլիվուտեան դերասան Մարք Ուոլպերգն է:*

*Ֆիլմում ցոյց է տրուելու, թէ ինչպէս էին առաջ Անատոլիայում (Արեւմտեան Հայաստանում-Ակունքի խմբ.) թուրքերը, քրտերը, հայերն ու այլ էթնիկ խմբեր ապրում «խաղաղ եւ բարեկամաբար», եւ թէ ինչպէս պատերազմը խաթարեց այդ հանգստութիւնն ու սկսեցին կռիւները:*

*Ցոյց է տրուելու «ընդհանուր ցաւը»: Հայերի վերապրածից բացի երեւալու է նաեւ թուրքերի եւ քրտերի զգացած ցաւը: Համաձայն սցենարի՝ դէպքերը տեղի են ունենալու Վանքաղաքում:*

*Հոլիվուտեան ընկերութեան կողմից (չի նշւում անունը- Tert.am) նկարահանուելիք ֆիլմի մի մասը նկարահանուելու է Աղթամար կղզում, Արարատի մօտ եւ Էրզրումում:*

# ՎՐԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՀՈԳԵՒՈՐ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՅԼԱՏԵԱՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ



*2014 թուականի Յունիսի 12-ին Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում անցկացուեց մամլոյ ասուլիս՝ Վրաց Ուղղափառ Եկեղեցու հոգեւոր ծառայող Տէր Դաւիթ Լասուրաշուիլու կրօնական խտրականութիւնից եւ այլատեացութիւնից բխող արարքի կապակցութեամբ:*

*Վիրահայոց թեմի իրաւական հարցերով բաժնի տնօրէն Լեւոն Իսախանեանը խօսեց Վրաց Ուղղափառ Եկեղեցու որոշ հոգեւոր ծառայողների կողմից Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ նրա հաւատացեալների դէմ ժամանակ առ ժամանակ խաղարկուող այլատեաց գործունէութեան մասին:*

*Այնուհետեւ թեմի հաւատացեալ, ծնող Իննա Սուքիասեանը պատմեց, թէ ինչպէս երէկ, Յունիսի 11-ին, քաղաքի տեսարժան վայրեր էքսկուրսիայի ժամանակ, Սիոնի եկեղեցի մտած իր 10 տարեկան դստերը հոգեւորական Տէր Դաւիթը արգելել է խաչակնքել Հայոց Եկեղեցու կարգով, աւելացնելով, որ Հայոց Եկեղեցի յաճախողները հեռու են Աստծուց եւ ցանկալի չէ նրանց ներկայութիւնը վրացական տաճարում: Նկատողութիւնից վիրաւորուած երեխան Եկեղեցուց դուրս է եկել: Նման քայլը դիտարկելով որպէս խտրականութեան եւ այլատեացութեան դրսեւորում, ծնողը սոցիալական ցանցի միջոցով իր զայրոյթն է արտայայտել անչափահաս երեխային կրօնական եւ ազգային խտրականութեան զոհ դարձնելու համար:*

*Մամլոյ ասուլիսի վարողը յաւելեց, որ ընդամէնը երկու շաբաթ առաջ նման մօտեցում է ամրագրուել Բաթումիի Նիկողայոս Հրաշափառի անուան ուղղափառ եկեղեցում, որտեղ Հայոց Եկեղեցու հաւատացեալին թոյլ չեն տուել պսակադրութեան արարողութեանը մասնակցել:*

# ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ - ԱՍՄՈՒՆՔԻ ԵՐԵԿՈՅ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ



15 Յունիս 1915-ին Պոլսոյ Սուլթան Պայազիտ հրապարակին վրայ կախաղան բարձրացած Հնչակեան Քսան Անմահներու նահատակութեան 99-ամեակին առթիւ, նախաձեռնութեամբ Թորոնթոյի Նոր Սերունդ Մշակութային Միութեան տեղի ունեցաւ յիշատակի ոգեկոչում Շաբաթ, 14 Յունիս 2014, երեկոյեան ժամը 7-ին, Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. Եկեղեցւոյ սրահին մէջ:

Հանդիսութեան ներկայ էին Ս. Աստուածածին Հայց. Առաք. Եկեղեցւոյ հովիւ Տ. Կոմիտաս Ա. Քհնյ. Փանոսեան, Հայ Աւետ. Եկեղեցւոյ երկարամեայ նախկին հովիւ Վեր. Եսայի Սարմազեան, Հայ Աւետ. Եղբայրութեան Եկեղեցւոյ հովիւ Վեր. Գրիգոր Կարապետեան, Թորոնթոհայ եկեղեցիներու, կուսակցութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներ, եւ գրասէր ու ընտրանի հոծ հասարակութիւն մը:

Այս առթիւ պատրաստուած յատուկ գրքոյկներ բաժնուեցան ներկաներուն, ուր տեղ գտած էին Քսաններու կենսագրականները, անոնց մասին եղած վկայութիւններ, պատմական տուեալներ եւ ձօնուած բանաստեղծութիւններ:

Գանատայի եւ Հայաստանի օրհներգներու ունկնդրութենէն ետք, մէկ վայրկեան յոտնկայս լռութեամբ յարգուեցաւ յիշատակը Հնչակեան Քսաններուն եւ ազգային ազատագրական պայքարի ճամբուն վրայ ինկած բոլոր հայ հերոսներուն:

Օրուան հանդիսավար Տիկ. Սիւզի Մխճեան-Գունտաքճեան իր բացման խօսքին մէջ անդրադարձաւ ազգային-ազատագրական պայքարին մէջ Հնչակեան Կուսակցութեան ունեցած անուրանալի դերին, եւ ի միջի այլոց ըսաւ. «Հայ ժողովուրդի երկունքէն ծնած Մայր Կուսակցութեան Քսան անմահ հերոսները եղան անզիջող բոլոր ձեւի բռնապետութեանց, բարձրացուցին սուր, հուր եւ զէնք, որպէսզի հայ ժողովուրդը կարենայ փշրել բռնութեան ժանտ շղթան եւ արդարութեամբ պայքարելով՝ ողջունէ վառ արշալոյսը ազատութեան: Հնչակեան Կուսակցութիւնը իր լաւագոյն ղեկավարներն ու շարքայինները զոհ տուաւ կախաղաններու, ռազմի դաշտերու եւ գնտաններու, որպէսզի հայ ժողովուրդը իմանայ թէ կը հետապնդէ արդար դատ մը, եւ ի գին այդ դատին կը նուիրէ զոհողութիւններու գերագոյնը՝ կեանքը»:

Ապա Տիկ. Ռոզին Իմաստունեան ընթերցեց ճամբորդութեան պատճառաւ բացակայ՝ Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. Եկեղեցւոյ




հովիւ Արժ. Տ. Զարեհ Ա. Քհնյ. Զարգարեանի յղած սրտի խօսքը,

Շար.ը էջ 19

# ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱՒԻԹԵԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ՝ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ

Սրբազնագո՜յնը մեր համբոյրներուն,
Եւ է՛ն անեղծը մեր վա՜ռ յոյզերուն,
Ձեզի՛ կը բերենք ո՜վ հայ անմահներ,
Ձեզի՛ մշտաբորբ ո՜վ անմար քսան Աստղեր:




Yes, because current Turkish, American, and NATO policies in the Caucasus strongly echo the 1993 Khasbulatov-Turkish plot. For two decades, the West has been trying to penetrate and dominate the Caucasus – Georgia, Azerbaijan, and Armenia – and eventually cross the Caspian Sea into energy-rich Central Asia.

One piece of the plan has already been partially implemented: constructing oil and gas pipelines from Azerbaijan through Georgia and Turkey.

NATO’s remaining goal: absorb the entire Caucasus. NATO would thereby threaten Russia from the south, just as it now pressures Russia from the west with its absorption of much of Eastern Europe (and, NATO hopes, Ukraine).

Georgia and Azerbaijan are inclined to eventually join NATO. Armenia, however, is not, though it has excellent relations with NATO and the West. Armenia has little choice but to ally itself with Russia because the former faces an ongoing existential threat from NATO member Turkey, the 1993 plot being one example.

Armenia is the Caucasus’s linchpin. Had the Khasbulatov - Turkish quasi-‘false flag’ operation against Armenia succeeded, Russia would probably have lost, and NATO would have gained, the entire Caucasus. New provocations, including ‘false flags,’ by Turkey and NATO cannot, therefore, be ruled out.

Turkish, American, and NATO leaders must also be interrogated as to whether their policies in the Caucasus are leading to peace or war.

# # #

The author is a freelance journalist. Many of his articles are archived at Armeniapedia.org (http://armeniapedia.org/wiki/David_B._Boyajian).

# Armenian Scientist Granted the Highest Award of Canaries



YEREVAN (Mediamax) — Armenian astrophysicist Garik Israyelyan was granted the highest award of Canary Islands, Gold Medal. The Gold Medal is awarded to individuals and organizations which made a significant contribution to the life on the Canaries.

The award was given to Garik Israyelyan by President of the Canary Islands Paulino Rivero. Garik Israyelyan works at the Institute of Astrophysics of the Canary Islands.

In 2010, Swiss astrophysicist and professor of Astronomy Department of Geneva University Michel Mayor and his scientific team including Garik Israyelyan and Nunu Santos became the first laureates of Victor Hambardzumyan International Award established in Armenia.

Garik Israyelyan is also the initiator of STARMUS scientific festival.

The second STARMUS Festival due to be held on the Canary Islands on September 22-27 will host world-famous British theoretical physicist and cosmologist Stephen Hawking. He is supposed to open the Festival titled “Beginnings: The Making of the Modern Cosmos”.

The second STARMUS Festival will also host internationally acclaimed astrophysicists, physicists and laureates of Nobel Prize.

The first STARMUS international festival was held in Tenerife in 2011. It was dedicated to the 50th anniversary of the human’s first flight to the universe by Yuri Gagarin, and it became a bright musical and scientific event.



## AGBU Hye Geen at the Forefront of Events of Social Significance

AGBU Hye Geen has taken the initiative to organize a public debate about a crucial issue affecting Armenians. A marked preference for sons has led to an increase of selective abortions, resulting in a serious imbalance of the sexes. Beside its demographic impact, the practice will ultimately affect the ethnic uniformity of our Homeland. With the decrease of eligible girls, foreign brides will be in demand, creating assimilation problems and adding to the difficulties of marriage.

The program will begin with the introductory remarks of AGBU Hye Geen member Lucineh Nalbandyan.

The first speaker is Shakeh Yegavian, who specializes in cross cultural as well as individual and couples therapy. She will probe the prevalence of gender preferences.

The second speaker is Talin Yacoubian, Esq, co-chair of the Armenian Genocide Centennial Commemorative Committee and since 2013, appointed to serve as a Civil Service Commissioner for the City of Glendale. She is also a member of AGBU Hye Geen Young Circle. Her topic is the demographic significance of selective abortions.

The third speaker is Rev. Father Shnork Demirjian, pastor of St. Peter Armenian Church in Van Nuys. Known for his unique ability to communicate with the youth, he fulfills the pastoral needs of AGBU Manougian-Demirdjian School. He will deal with the religious and national perspectives of the gender imbalance.

This public debate of critical social significance will take place on Saturday July 26, 2014 at the AGBU Center, 2495 East Mountain Street, Pasadena, California 91104.

## Armenia-NATO Ties 'Unaffected'

Continued from page 1

earlier in May that they will join a new NATO mission dubbed Resolute Support.

"The relations between Armenia and NATO are very good," Karl Lamers, the deputy president of the NATO Parliamentary Assembly, said during a visit to Yerevan earlier this week. Lamers told RFE/RL's Armenian service (Azatutyun.am) that those relations will not be adversely affected by Armenia's plans to join another Russian-led structure, the Eurasian Economic Union.

## President Sarkisian Concludes Visit to Georgia

Continued from page 1

nations has been a key stabilizing factor in the volatile South Caucasus. "We have always respected each other's decisions in the knowledge that each of us has a priority to strengthen its own state," he said.

"Armenia's membership in the Customs Union [of Russia, Belarus and Kazakhstan] is opening up new prospects for those Georgian entrepreneurs who want to invest in Armenia and have export markets in Russia or the union's other member states," added Sarkisian.

Sarkisian did not comment on the likely impact on Georgian-Armenian trade of higher import duties which Armenia will have to enforce after joining the Russian-led bloc. Customs Union membership also means that Armenia will not be able to negotiate bilateral free-trade deals with any country, including Georgia.

According to Armenian government data, the total volume of Armenia's trade with Georgia rose by 27 percent to $152 million last year. Even so, Georgia, which serves a transit route for at least two-thirds of goods shipped to and from Armenia, accounted for only 2.6 percent of Armenian foreign trade.

The presidents told journalists after the talks that they had exchanged opinions on ways to turn the two countries' "different paths" into new opportunities for Georgian and Armenian businesses.

Sarkisian said that the "constant strengthening of the Armenian-Georgian partnership" represents one of Armenia's foreign policy priorities.

Margvelashvili said Tbilisi and Yerevan share the same opinions on many issues concerning bilateral relations and regional cooperation.

## Armenian Summer Festival in Barnsdall Park

Continued from page 1

commitment to cultural arts as the City of Los Angeles' Chair of the Arts, Parks, Health, Aging and Los Angeles River committee, and a former professional dancer.

"We are very happy with the successful turnout of the Armenian summer cultural festival and the commencement of Nor Serount's 60th anniversary celebration festivities," said Harut Der Tavitian, Chairman of the Nor Serount Cultural Association. "Many spectators, including non-Armenians, were very interested in the rugs, tapestry and vintage posters that we had displayed in the booths and of course, who could resist delicious Armenian food? Our goal was to engage the Armenian-American community in Hollywood and neighboring cities in a cultural event, as well as showcase our culture and heritage to our non-Armenian neighbors and friends. Overall, the event was a smash success," he added.

The Nor Serount Cultural Association is dedicated to educate Armenian youth about their culture while teaching them to appreciate other cultures, and to introduce the Armenian culture to non-Armenians in pursuit of promoting diversity and harmony.

## Bringing the Elixir of Life to Karvachar



Karvachar, a town that had no running water is where Armenia Fund built a brand new distribution network that now provides the town with safe drinking water 24 hours a day.

It's early Saturday morning. You walk over to the sink and start brushing your teeth. The cool water you splash on your face gives you a little jolt and opens your eyes. You're awake.

Showers are always better on the weekend. No rush, just a relaxing time before continuing a day of leisure. You walk to the kitchen, thinking about what hot drink you want to start your day with. Then you see you see a steaming mug of coffee and a pot of hot tea - somebody at home has made both. Coffee first.

The cup of joe in your hand, you venture outside and turn on the hose. The trees, grass, and flowers need watering. You want to make sure your grass is green for this summer's barbeques and you want your trees to bear more apricot and pomegranate than last year.

Everything you've done so far has required water. And it's not even noon yet.

According to the United States Environmental Protection Agency, the average American family of four uses 400 gallons of water per day. That's 400 individual gallon bottles a day and 2,800 gallons per week.

Until recently, the town of Karvachar, in Artsakh's northwest, had no running water. The families there certainly do not use as much water as those in America but they have the same basic needs. And although the region will soon be the beneficiary of increased trade because it sits along the Vardenis-Martakert Highway being constructed by Armenia Fund, it is the most underdeveloped part of Artsakh and was heavily affected by the War for Independence.

Without running water, families need to collect water they're going to use from either a pump or a well. The water might then be stored in improvised home reservoirs, usually using household trashcans that hold about 32 gallons.

Even if this was enough water to drink and to cook food, there isn't enough to bathe or shower, making interfamily sickness more likely. That aside, these crude reservoirs are not subject to treatment like water that comes out of a faucet. In fact, the makeshift reservoirs are likely to turn into stagnant pools that become breeding grounds for different types of waterborne sickness that can be passed to people who come in contact with it.

Not being able to brush your teeth or take a shower are hygienic issues that could have serious consequences over time. But to not have clean drinking water available is a central issue that has a significant negative impact on public health, particularly children.

Lack of access to safe drinking water and proper sanitation is so important that it forms an integral part of United Nations Secretary-General Ban-Ki Moon's Five-Year Action Agenda. Waterborne illnesses and disease affect millions of people a year and they are often due to contaminated water. That's why the UN, the World Health Organization, and others have made increasing access to clean water to populations around the world a top priority.

Knowing the importance of clean water and the hugely positive impact it would have on sanitation, hygiene and, public health, Armenia Fund chose to build a brand new water distribution system in Karvachar that would serve its 570 residents. The water supply system, which cost over $400,000, includes 5 miles of pipes that connect to the town's 120 households. Two reservoirs, with a combined capacity of 26,400 gallons, were also constructed to help regulate distribution and ensure that the flow of water is consistent. Residents now have round-the-clock water that comes directly to their homes.

While it's unlikely that anyone in Karvachar will be taking leisurely 20-minute-long showers or watering a rose garden, everyone in the town will now have access to the basic human right of safe drinking water. And although its large-scale infrastructure projects like the Vardenis-Martakert Highway will impact the lives of millions of people, improving the lives of a few hundred is equally worthwhile for the Armenia Fund and it always has been. No project is too small if it helps people live better, healthier lives.

# ՎԱՌՕԴԻ ԼԵԶՈՒՆ ԴԵՌ ԿԸ ՀՄԱՅԷ՞

*ԱՒԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ*

*Հայաստանի խաղաղ ու անամպ երկինքը ըմբոշխնելը դարերու երազանք եղած է: Հայրենի հողին վրայ անվտանգ ու շինարար կեանքը գրեթէ բացառիկ երջանկութիւն համարուած է: Այժմու Հայաստանի ապահով ու կայուն պայմանները իսկական վայելք ըլլալու են: Սակայն, այդ հաճոյքն ունի իր գինը. ծա՜նր գինը:*

*Հայաստանի մէջ հազարաւոր մայրեր կան, որոնց սիրտը ամէն օր բնականէն արագ կը բաբախէ: Իրենց որդիները հայկական բանակ ծառայութեան կոչուած մայրերուն հոգեկան աշխարհն ու ամէնօրեայ աղօթքները վստահաբար առնչուած են իրենց զաւակներուն անվտանգ ծառայութեան եւ ողջ առողջ տուն դարձին:*

*Այս խախուտ եւ պրկուած իրավիճակը, ակնյայտ է, որ հետեւանքն է հայ-ատրպէյճանական հակամարտութեան անլոյծ մնալուն: 1994 Մայիս 12-ին ստորագրուած հրադադարի համաձայնութիւնը նոյնիսկ մասնակի լուծում չէ: Տագնապը կը մնայ առկայ այնքան ժամանակ, երբ հակոտնեայ կողմերը տակաւին հարցը կարգաւորած չեն իր ամբողջութեանը մէջ եւ իր բոլոր մանրամասնութիւններով: Ռազմաքաղաքական եզրաբանութեամբ այսպիսի պարագաները կը կոչուին «ոչ պատերազմ, ոչ խաղաղութիւն»:*

*Վերոնշեալ հրադադարին կայացումէն ետք, որ կեանքի կոչուեցաւ Պաքուի իշխանաւորներու խնդրանքին եւ ռուսական ազդու միջամտութեան շնորհիւ, երբ հայկական կողմը վճռական թափով ատրպէյճանական տարածքներ կը գրաւէր, միշտ ալ հայ-ատրպէյճանական նորաստեղծ քարտէզը մնաց պայթունավտանգ՝ սեղմ սեղմ փոքրածաւալ ընդհարումներու պատճառով: Հայ-ատրպէյճանական «շփման գիծ» կոչուած սահմանը դարձաւ հայ եւ ազերի զինուորներու հաւանական գերեզմանը, յաճախակի բախման վայրը, ուր դիպուկահարներէ մինչեւ սահմանապահներ, «տիվերսիոն գործողութեան» փորձերէն մինչեւ անակնկալ ճակատումներ խլեցին զոհեր երկու կողմերէն ալ: Պատահեցան նաեւ քաղաքացիական բնակչութեան դէմ կրակոցներ եւ ինկան անմեղ զոհեր:*

*Վերջին շրջանին, հակամարտութեան «շփման գիծ»ին շուրջ յաճախակի դարձած զինեալ բախումները ստացած են լայնածաւալ բնոյթ եւ հասած մտահոգիչ աստիճանի՝ հետաքրքրելով մինչեւ իսկ արտաքին ուժեր, մտահոգելով միջնորդ կողմեր, որոնք ուղղակիօրէն կը կրկնեն իրենց նախազգուշացումները լարուածութեան մեղմացումին եւ հաւանական ծանրակշիռ հետեւանքներու մասին:*

*Այս ծիրին մէջ, անցեալ շաբաթ պատահած երկու ուշագրաւ եւ աննախադէպ իրադարձութիւններ բնաւ լաւատեսական յոյսեր չեն ներշնչեր: Աւելին՝ հակամարտութեան անթեղուած կրակին վերաբորբոքումը կ'ահազանգեն:*

*Առաջին անգամ ըլլալով զինեալ բախումը պատահեցաւ Նախիջեւանի սահմանամերձ գօտիին մէջ (Երասխաւանի մօտ), որուն հետեւանքով նահատակուեցան զինծառայողներ Անդրանիկ Եղոյեանն ու Պորիս Գասպարեանը: Առաջին անգամ ըլլալով Հայաստանի Հանրապետութեան Պաշտպանութեան նախարարութիւն կանչուեցաւ ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնական ներկայացուցիչ, Մինսքի Խմբակի համանախագահներուն ուղեկցող, դեսպանորդ Անճէյ Գասպրշիքը: Հայաստանի պաշտպանութեան նախարարը զգուշացուցած է օտարազգի դիւանագէտը, որ այս լարուածութեան շարունակման պարագային, Ատրպէյճան պիտի կրէ անոր ծանր հետեւանքները:*

*Դեսպանը խոստացած է մօտէն հետեւիլ կացութեան եւ առաջքը առնել նման վտանգաւոր զարգացումներու (միշտ ալ եղած են նման խոստումներ):*

*Այս անախորժ զարգացումներու լոյսին տակ ակամայ մարդ կը մտմտայ՝ վերջապէս ի՞նչ է պահանջուածը, ի՞նչ կը նպատակադրեն նման վարքագիծի մը դրսեւորումները եւ ինչո՞ւ նման դէպքեր կը բազմապատկուին յատկապէս այս ժամանակաշրջանին:*

*Անդրկովկասի վերջին շուրջ 300 տարուան պատմութիւնը դիտարկելով կը նշմարենք, որ տարածաշրջանին մէջ արձանագրուած որեւէ լուրջ զարգացում պինդ թելերով կապուած է Ռուսաստանի ներքին կամ արտաքին իրադարձութեանց հետ:*

*Արդարեւ, Անդրկովկասը հետզհետէ Ռուսաստանին միացաւ Մեծն Պետրոս Ցարին դէպի հարաւ ընդարձակուելու քաղաքականութեան հետեւանքով: Ռուսական սուինին երեւումը տարածաշրջանին մէջ նոր իրավիճակ ստեղծեց անխուսափելիօրէն: Որմէ ետք, Անդրկովկաս-Պարսկաստան սահմանագիծը գոյացաւ ռուս-պարսկական 1826-1828 պատերազմէն ետք 10 փետրուարին ստորագրուած Թիւրքմէնչայի պայմանագիրով:*

*Ապա, տարածաշրջանին Ռուսաստանի կցումէն ետք, տեղւոյն վարչաքաղաքական բաժանումները կատարուեցան ռուսական հայեցողութեամբ եւ որոշումով: 1905-ին, ռուս-ճաբոնական պատերազմին Ռուսաստանի կրած խայտառակ պարտութեան եւ Ռուսաստանի մէջ յեղափոխական շարժումներու շիկացման լոյսին տակ ծայր առին հայ-թաթարական արիւնալի մարտերը:*

*Անդրկովկասը՝ Պաքուէն Նախիջեւան, Թիֆլիսէն Գանձակ, Երեւան ու Շուշի ինկաւ լափլիզող բոցերու մէջ իր անվերականգնելի կորուստներով: 1918-1923 թուականներուն Ռուսաստանի մէջ պատահած պոլշեւիկեան յեղափոխութիւնը, քաղաքացիական պատերազմը, անսանձահարելի թոհուբոհը նոր պատերազմ եւ քարտէզի փոփոխութիւններ պատճառեցին տարածաշրջանին մէջ. Հայաստան եւ Ատրպէյճան յայտնուեցան իրերու նոր դրութեան մը դէմ յանդիման: Հուսկ, 1988-ին Մոսկուայէն յայտարարուած բարենորոգչական շարժումը եւ ապա Խորհրդային Միութեան տարբաղադրումը պատերազմական նոր հանգրուան մը նախանշեցին եւ կրկնուեցաւ անցեալի սենարիոն մինչեւ 1994 Մայիս 12-ի հրադադարը:*

*Ահա 20 տարիներու անլոյծ թնճուկ մը կայ մեր ետին, որ կը յատկանշուի փխրուն կայունութեամբ, ռազմատենչ յայտարարութիւններով, կացինահարմամբ, մկանաձգութիւններով եւ մերթ ընդ մերթ արիւնալի միջադէպերով:*

*Բացորոշ է, որ որպէս յաղթական կողմ Հայաստան հետամուտ է ներկայ կացութեան պահպանմամբ եւ ամրապնդմամբ. ժամանակին սլաքը կը սահի ի նպաստ Երեւանին: Մինչ ջղագրգիռ կողմը Պաքուն է, որ կը սպասէ յարմար պահին՝ վերատիրանալու ըստ իրեն իր կորսնցուցած տարածքին: Բայց, ե՞րբ է այդ պահը:*

*Վերոթուեալ պատմական դէպքերու տուեալներէն մեկնած, արդեօ՞ք Ռուսաստանի շուրջ ծաւալող իրադարձութիւնները Պաքուն մղած են նոր արկածախնդրութեան մը դիմելու: Վերջին շրջանի ռուս-ուքրանական տագնապը, Խրիմի հարցը եւ Արեւմուտք-Ռուսաստան լարուածութիւնը արդեօ՞ք Ատրպէյճանի համար յարմար մթնոլորտ ստեղծած են հրահրելու Հայաստան-Ատրպէյճան նոր ճակատում մը: Այլապէս, ինչո՞ւ նոր ճակատ բանալ Նախիջեւանի ուղղութեամբ:*

*Երբ պատահաբար կը թերթատէի 2004-ի «Արարատ» բացառիկը, էջ 30-ին վրայ կարդացի՝ «Նախագահ Ալիեւի յաջորդած որդին՝ Իլհամ Ալիեւ, 26 Հոկտեմբեր 2003-ին, Մինսքի Խմբակի առաքելութիւնը ձախողած նկատեց եւ յայտնեց որ «Ժամանակը հասունցած է տագնապը ինքնուրոյն ձեւով լուծելու՝ զինուորական տարբերակով»: Այսինքն, 10 տարիէ Իլհամ Ալիեւ կը մտմտայ զինուորական արկածախնդրութեան մը շուրջ՝ ի հարկէ առանց համարձակելու:*

*Մեզ հանգստացնող գործօնը, անշուշտ, Հայաստանի ղեկավարներուն ինքնավստահ եւ վճռական յայտարարութիւններն են: Նախագահ Սերժ Սարգսեան կը յայտնէ, թէ «Ատրպէյճան ոչ կարողութիւն ունի եւ ոչ հնարաւորութիւն պատերազմը սկսելու», կամ՝ «եթէ պիտի յարձակուեն, ապա ինչո՞ւ այդ չեն անում», ուրեմն՝ պատգամը յստակ է: Իսկ պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան երբ կը յայտնէ թէ «համարժէք պատասխան» կը տրուի ամէն զինաբախումի, կամ՝ կը զգուշացնէ Ատրպէյճանը ծանր հետեւանքներէ, ուրեմն մութ ամպերը փարատած պէտք է նկատել: Սակայն, մինչեւ ե՞րբ հայ զինուորներու մայրերը պիտի շարունակեն սեւեր հագնիլ…:*

*Միւս կողմէ, Ռուսաստան-Արեւմուտք յարաբերութեանց վատթարացման պարագային եւ ռուսական դիրքերու թուլացման զուգընթաց Ի. Ալիեւ պիտի ապաւինի՞ պատերազմի ընտրանքին. պիտի դիմէ՞ վառօդի լեզուին: Վառօդի լեզուն տակաւին կը հմայէ՞ պարտեալ Պաքուն:*

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին**

T: (626) 797-7680
F: (626) 797-6863
Email: massis2@earthlink.net



# ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՒ ԳԱՆ ԶՈՅԳ ԱՓԵՐԷՆ

## ԲՈՒԺՔՈՅՐԵՐ, ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԵՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐՈՒ ԿԱՐԳԻՆ ԵՆ




Սուրիահայութեան ճգնաժամային դրութեան շարունակութեամբ նորանոր զոհեր կը խլուին Հալէպէն Դամասկոս ու Քեսապ: Ամերիկայի Արեւելեան ափի հայ գաղութները կը շարունակեն նիւթական օժանդակութիւն հայթայթել Սուրիոյ Հայութեան Զօրակցութեան Միացեալ Մարմնին (ՍԱՐՖին), որուն գլխաւոր նպաստը կու գայ արեւմտեան ափէն:

Հայ Ամերիկեան Հիւանդապահներու Միութիւնը, որ հաստատուած էր 1988ի Հայաստանի Սպիտակի երկրաշարժէն յետոյ, կեդրոնացուցած է իր ուշադրութիւնը նոր աղէտին վրայ: Ըստ կազմակերպութեան նախագահ Տոքթ. Զարմինէ Նազգաշեանին, հիւանդապահները իրենց նուիրատուութիւնները կատարեցին «փոխան միութեան տրամադրուելիք կաղանդի նուէրներու»: Այսպէսով 3,500 տոլար հանգանակուեցաւ:

Կլէնտէյլի Ուսուցիչներու Ընկերակցութիւնը, որուն կ'անդամակցին աւելի քան 1,200 ուսուցիչներ՝ տեղական մասնաճիւղերէն մին է Քալֆորնիոյ Ուսուցիչներու Ընկերակցութեան: Ընկերակցութեան նախագահ Ֆիլիս Միլլըր 500 տոլարի նուիրատուութիւն մը փոխանցեց ՍԱՐՖի Գործադիր Մարմնի ատենապետ Զաւէն Խանճեանին: Ընկերակցութեան փոխ-նախագահ Թալին Արսէնեանը գնահատած է Խանճեանի բծախնդրօրէն պատրաստուած տեղեկութիւնները, որակելով զայն «դասարանի յարմար»:

Մասաչուսէց Նահանգի Պոսթըն Համալսարանի Հայ Ուսանողներու Ընկերակցութիւնը 1,000 տոլար հանգանակած է եռագոյն ապարանջաններու վզկապներ վաճառելով, որոնք ապարանջանները հագած են վկայականաց բաշխման արարողութիւններու ընթացքին: Համալսարանի Լիբանանեան ակումբը տրամադրած է գումարին մէկ երրորդը:

Միչիկըն Համալսարանի Հայ Ուսանողներու Ընկերակցութիւնը հանգանակած է 3,500 տոլար. Տիթրոյթի Հայ Կանանց Ակումբը՝ 500 տոլար. Ֆիլատելֆիոյ Հայկական Միջ-Գաղութային Յանձնախումբը՝ 1,000 տոլար. Նմանապէս Մէրիլանտ Նահանգի Ուէսթ Ֆրէնտշիփ քաղաքէն Ռաֆֆի Եուսէֆեանի բարեկամները հանգանակած են՝ 1,000 տոլար: Կլէնտէյլի «Fighting Club»ը 1,100 տոլար հանգանակեց խառն մարտարուեստի Մայիս 17ի սեմինարին: Հիւսիսային Քալիֆորնիոյ Սան Մաթէօ շրջանէն Տէր եւ Տոքթ. Ապրահամ եւ Մարիան Եագուպեանները հանգանակած են 1,200 տոլար փոխան նուէրներու իրենց մանչին տարեդարձին առիթով:

Վարուժան Գունտաքճեանի բարեկամները «Կիլիկիոյ Ապետ» շքանշանին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի կողմէ շնորհուելուն առիթով Քեսապի համար Կլէնտէյլի մէջ հանգանակեցին 75,000 տոլար: Ձեռնարկը նաեւ առիթ մըն էր Գունտաքճեանի 80րդ տարեդարձը տօնելու:

Յառաջիկայ Ձեռնարկ.-

12 ամեայ Էլիզապէթ Քուպաթեան որոշած է հանգանակութեան արշաւ կատարել Քէնիթիքէդ Նահանգի Նիւ Հէյվըն քաղաքի Ալէքս եւ Անի հաստատութենէն ներս, Երեքշաբթի, Յունիս 17, 2014ին, երեկոյեան ժամը 5էն 7ը (284 New York Street, New Haven, Conn): Հետաքրքրուողները կրնան պատառ մը ուտել եւ իրենց գնումներուն 15 առ հարիւրը պիտի տրամադրուի ՍԱՐՖին: Քուպաթեանի հետ կապ կարելի է պահել NKBTN3@gmail.com ե-նամակի հասցէով:

Գաղութի անդամներ, որոնք մտահոգ են Սուրիահայութեան դիմագրաւած վտանգներով, իրենց տարեդարձներուն եւ փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կրնան փոխանցել ՍԱՐՖին, օգնութեան ձեռք երկարելու մեր քոյրերուն եւ եղբայրներուն, որոնք օրական կը դիմագրաւեն վտանգներ եւ ապրուստ ապահովելու անհնար պայմաններ, յաճախ զրկուած են ամենէն տարրական պէտքերէ կամ բաւարար սնունդ հայթայթելէ իրենց ընտանիքներու: Հոգեկան եւ մարմնական բեռները ծանր կը ճնշեն ոչ միայն մանուկներուն, այլ նաեւ չափահասներուն վրայ:




# ՀԱ՛ՐԿ Է ՏԱԳՆԱՊԻԼ

ԶԱՒԷՆ ԽԱՆՃԵԱՆ



Անախորժ մաղթանք մը գուցէ, բայց եւ անհրաժեշտ:

Հա՛րկ է տագնապիլ:

Ատոնք անաստնէն զատորոշող յատկանիշներէն մէկն է տագնապիլը:

(Այդքան ալ վստահ չեմ թէեւ)

Տագնապի՛լ՝ մարդու ցաւով:

Տագնապի՛լ՝ հայու ցաւով:

Տագնապի՛լ՝ սուրիահայու ցաւով:

Տագնապի՛լ՝ տարագիր քեսապահայու ցաւով:

Տագնապի՛լ՝ Գողգոթայի արհաւիրքը ապրող հալէպահայու ցաւով:

Տագնապիլը՝ հարցերու լուծման հրաշքի նախապայմանն է:

Տագնապելով Սարտարապատի հերոսները փրկեցին հայրենիքը:

Տագնապելով Արցախի հերոսները ազատագրեցին հայրենի հողը:

Տագնապելով ամերիկացի ժողովուրդը վերջապէս յետ կոչեց Վիէթնամի քանդիչ եւ նողկալի պատերազմը:

Տագնապելով ամերիկացի ժողովուրդը կարողացաւ Թումբ կանգնիլ Օպամայի Սուրիոյ վրայ յարձակելու վատահամբաւ ծրագրին դիմաց:

Ողբերգութեան, աղէտի, արհաւիրքի դիմաց տագնապիլը, հոգին ազնուացնող, վեհանձն եւ վսեմ զգացում մըն է:

Եւ՝ նախապայմանը մեղմելու ցաւը, թեթեւցնելու տառապանքը եւ գուցէ վերացնելու ենթադրուած ամենաաղիտալի վախճանը:

Դար մը առաջ, Վեր. Ահարոն Շիրաճեանի հերոսական ջանքերով Հալէպի սահմանամերձ տափաստանի մը վրայ կեանք առաւ Նոր Գիւղ աւանը, երդիքի մը տակ հաւաքելով Թուրք եաթաղանի երկնած հազարաւոր հայ որբերը:

Այսօ՛ր, դար մը ետք, կայսերական լորձնաշուրթն ախորժակներով յորդուն Թուրք Էրտողանի, հիւրընկալած, զինած եւ արձակած հրոսակներու ձեռքով, Նոր Գիւղի ծաղկած, փթթած, աճած եւ զարգացած հայաւանը կրկին տափաստանի կը վերածուի:

Սուրիահայու տառապանքը այսօր՝ եղեռնելի է:

Եւ եթէ ոմանք տակաւին պարզամտօրէն կ'երեւակայեն թէ կը չափազանցենք, հարց կու տանք՝

Ե՞րբ էր վերջին անգամ որ մենք հայկական մասունք հողապատառ մը կորսնցուցինք:

Ե՞րբ էր որ ձեր ապրած քաղաքին մէջ փոխան ջրահոս ծորակներու, ջրհորներ փորուեցան կեանքի ամենատարրական պէտքը՝ ջուրը ապահովելու:

Ե՞րբ էր որ ձեր կեանքերը russion rulleteի խաղի հիմքով վտանգի ենթարկուեցան: Հալէպահայը, արեւածագին կ'արթննայ առանց վստահ ըլլալու թէ այդ օր զոհ պիտի չերթայ հրասանդի կարկուտին եւ կամ ռումբի մը պայթումին:

Մեր ազգային հաւաքական կեանքի մէջ, առանց երբեւիցէ մոռցած ըլլալու, հազիւ թեթեւցած Դուրեանի տառապանքի բեռէն «Այս ճակատագիրն ին՞չ սեւ է Աստուած»

Կամ Ահարոնեանի «գահ եւ աստուած» մերժումէն եւ տակաւին հազիւ մեր կոկորդները չորցուցած Սիամանթոյի մարդկային արդարութեան տրուած արժանի պատիւէն,

Վերադարձա՞ծ ենք ճակատագրի ցասումին, աստուածներու ժխտումին եւ արդարութեան Թուքի պսակին:

Տագնապիլը՝ տուայտանք չ'է:

Տուայտանքի վերացումի նախաքայլն է:

Փրկութիւնը մեր տագնապելուն մէջ է:

Տագնապիլ կը մաղթեմ բոլորիս:

Հաւաքաբար:

Մնացեալը՝ չքմեղանք է:

## ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐԻՆ

### ԱԼԲԵՐՏ ԳՐՔԱՇԱՐԵԱՆ

Քսան հսկայ, դիւցազնական
Ժայռեր անշարժ ու աներեր,
Որոնք եղան ազատութեան
Յրեղէն սիւները երկնաքեր:

Փա՜ռք ու պատիւ յաւերժական
Ուխտեալներին մեր Յնչակեան:

Ահա նրանք՝ քսան անմահ
Փարամազներ գաղափարի,
Որոնց համար չեղաւ ոչ ահ
Եւ ոչ էլ մահ սարսափելի:

Փա՜ռք ու պատիւ յաւերժական
Ուխտեալներին մեր Յնչակեան:

Եւ միշտ եղան հերոսական
Ահեղ մուրճեր ու բազուկներ
Փշրելու հին լուծն ու շղթան
Ստրուկների մերկ ու անտէր:

Փա՜ռք ու պատիւ յաւերժական
Ուխտեալներին մեր Յնչակեան:

Քսան սիւներ կախաղանի,
Որոնք ընդհուպ շեմին մահուան
Սասանեցին սուլթանների
Պալատները ողբի արեան:

Փա՜ռք ու պատիւ յաւերժական
Ուխտեալներին մեր Յնչակեան:

Եւ մենք այսօր ձեր բոլորի
Ճակատներին Մասեաց գագաթ՝
Պիտ դրոշմենք մեր սրտերի
Յամբոյրները երախտապարտ:

Փա՜ռք ու պատիւ յաւերժական
Ուխտեալներին մեր Յնչակեան:

Եւ դեռ մենք էլ պիտի լինենք
Ուխտեալները նուիրական
Դրօշակին Ս.Դ.Յ.Կ.
Եւ կոչումին վեհ Յնչակեան:

Փա՜ռք ու պատիւ յաւերժական
Ուխտեալներին մեր Յնչակեան:

# ՄԵՐ ԴՊՐՈՑԻ ԽՆԴԻՐՆ ԵՆ ՈՒԶՈՒՄ ԴԱՐՁՆԵԼ ԳԱՂԹԱԿԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԲԱՒԱՐԱՐՈՒՄԸ



Մեր զրուցակիցն է Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի հիմնադիր Աշոտ Բլէեանը

- Պարոն Բլէյեան, ռուս հեռուստամեկնաբան Դմիտրի Կիսիլիովը ԱԺ-ում հայ պատգամաւորներին յանդիմանական տոնով նախատեց, թէ ռուսաց լեզուն Հայաստանում նահանջում է եւ հարց ուղղեց, թէ ինչ են անում վերջիններս դա կանխելու համար: Նա նաեւ առաջարկեց աւելացնել ռուսալեզու դպրոցների թիւը Հայաստանում եւ ռուսերէնին յատուկ կարգավիճակ տալ: Սա ինչի՞ հետեւանք է. պարզապէս անտակտ մարդու պահուա՞ծք, թէ մենք քաղում ենք Սեպտեմբերի 3-ի պտուղները:

- Հռետորական հարցեր էք տալիս, որովհետեւ բոլորս գիտենք դրանց պատասխանները: Մինչեւ Հայաստանի անկախութիւնը ռուսերէնը համարւում էր մեծ հայրենիքի՝ ԽՍՀՄ-ի, լեզու, եւ մարդիկ չեն մոռացել դա: Ու ոչ մի տարբերութիւն չկայ, դա բարձրաձայնում է Կիսիլիովը, թէ մէկ ուրիշը, քանի որ այստեղ խնդիրը մենք ենք, մեր իշխանութիւնը, մեր մտածողութիւնը, մեր ռուսահպատակութիւնն ու մեր դժբախտութիւնը ռուսերէնի վատ իմանալով բացատրելը: Եւ դա կարելի է հասկանալ, որովհետեւ այսօր մեր դպրոցի խնդիրն են ուզում դարձնել գաղթականի կարիքների բաւարարումը: Եթէ մարդը որոշել է հեռանալ Հայաստանից, նա հեռացողի, քոչուորի խնդիր է դնում, ասելով՝ դու ինձ ռուսերէն սովորեցրու, ու նրա համար այլեւս կարեւոր չեն քաղաքացիութիւնը, հայրենատիրութիւնը, Հայաստանը խնամելու, հողը վարելու, ցանելու կարողութիւններ ունենալը: Այսինքն հայաստանեան դպրոցի խնդիրը մղւում է երկրորդ պլան, առաջին պլանում գաղթականի կարիքների բաւարարումն է դառնում:

- Պարոն, Բլէյեան, Կիսելիովին խոցել էր նաեւ այն, որ Երեւանում տաքսու վարորդը չէր կարողացել ռուսերենով հաշիւն ասել:

- Դէ գիտէք, լուրջ չի, երբ ոմն Կիսելիով եկել է ԱԺ ու իրեն թոյլ է տուել նման արտայայտութիւն: Կարծեմ Նիկոլ Փաշինեանը որպէս ԱԺ պատգամաւոր, յստակ պահանջ է ներկայացրել՝ անցանկալի անձ յայտարարել այդ մարդուն: Ես լրիւ համաձայն եմ, որ երբ կեղտոտ ձեւով միջամտում են քո երկրի ներքին գործերին, իրօք, իշխանութեան խնդիրն է արձագանքել դրան: Բա պետութիւնն ու իշխանութիւնն ինչի՞ համար են: Կիսելիովը թող անգլերէնով խօսի վարորդի հետ, թող ձեռքով ոտքով խօսի, ամէն օր կարող է նման բան լինել, բայց ով է Կիսելիովը, որ նման տոնով յայտարարութիւն անի եւ մնայ անպատասխան: Կայ իշխանութիւն, որը պիտի պատշաճ ձեւով պատասխան տայ սրան, այստեղ քննարկելու բան էլ չկայ:

Ինչ վերաբերում է ռուսական կոչուած դպրոցներին, ապա ցաւօք, Հայաստանում 42 այդպիսի դպրոց կայ, որից 18-ը՝ Երեւանում: Այդ դպրոցները ստեղծուել են, գործում են Հայաստանի Սահմանադրութեան, «Լեզուի մասին» եւ «Հանրակրթութեան մասին» օրէնքների արհամարհումով: Օրէնքով այդ դպրոցները չպիտի լինէին, ինչո՞ւ Հայաստանում ռուսերէնով ուսուցմամբ դպրոցներ լինեն, ո՞ւմ համար: Եթէ կոմպակտ ապրող ռուսական համայնք կայ, ասենք մոլոկանների գիւղերում, ապա այդպիսի դպրոցներ պիտի լինեն ու կան: Բայց Երեւանում 18 ռուսական դպրոցներում ովքե՞ր են սովորում: Չի կարող Հայաստանում պետական դպրոցը չլինել մայրենի լեզուով: Մեր խնդիրն այսօր պիտի մայրենին լինէր, որովհետեւ մտածողութեան, զարգացման խնդիր կայ, մեր պետութիւնը ստեղծել ենք, որ մայրենին պահպանուի մեր միջոցով: Մեր հասարակութեան, ընտանիքի խնդիրն է պահպանել մայրենին, ու դրա լաւագոյն տեղը հենց դպրոցն է: Սա պիտի լինի պետութեան ու իշխանութեան հոգսը բոլոր մակարդակներում, ոչ միայն ԿԳՆ-ի:

Դպրոցական բոլոր առարկաների դասաւանդումն այսօր խայտառակ վիճակում է: Դրանք սուտ առարկաներ են, որոնց վրայ մեծ ժամանակ է ծախսւում եւ որոնք ուղղուած չեն երեխաներին, հանրակրթական չեն: Խայտառակ վիճակում է երաժշտութիւն առարկան: Եթէ մեզանում երաժշտական հանրակրթութիւն լինէր, այս անճաշակութիւնը կը թագաւորէ՞ր Հայաստանում: Իհարկէ՝ ոչ: Մեզանում մաթեմատիկան ուղղուած է մտածողութեան զարգացմա՞նը, իհարկէ՝ ոչ. ինչ-որ առարկաներ են, ինչ-որ գնահատանիշներ: Ու այդ բոլոր առարկաների մէջ ամէնից անպաշտպան վիճակում մայրենին է, որովհետեւ այն մի արհեստական, անկենդան, նաեւ ռուսերէնի ու անգլերէնի կողմից նուաստացուող առարկայ է դարձել: Սրա մասին պէտք է լինի խօսքը, մայրենին պիտի կենդանի, զարգացնող, երեւակայութիւնը խթանող լինի:

Մեր դպրոցներում ռուսերէնը դասաւանդում են 2-րդ դասարանից մինչեւ 12-րդ դասարան, 9-րդ եւ 12-րդ դասարաններում քննութիւն կայ, ռուսերէնի խորացուած ուսուցմամբ հարիւրաւոր դպրոցներ կան, միթէ ռուսերէնն այսօր խնդիր է Հայաստանում: Մարդիկ գնում են Ռուսաստան, մէկ ամսում սովորում են լեզուն, բայց միթէ դա ՀՀ իշխանութեան կամ հայաստանեան դպրոցի խնդիր է, իհարկէ՝ ոչ:

- Սա փաստօրէն Հայաստանին եւս մէկ անգամ նուաստացնելու, իրենց գերիշխանութիւնն ամրապնդելու խնդի՞ր է լուծում:

- Պատկերաւոր ասած, սա նշանակում է, որ կարմիրներն արդէն Երեւանում են, նեոբոլշեւիզմը, մեծապետականութիւնը, որը թւում էր՝ 25 տարում պիտի թօթափած լինէինք: Մենք հիմա պիտի ազատ, անկաշկանդ զբաղուած լինէինք մեր երեխաների խնդիրներով, օրինակ շոգ ամրանը Հայաստանի մանկապարտէզներում քանի երեխայ է լողում, քանի ուսումնական ճամբարներ կան, քանի ակումբ կայ, երեխաներն ինչ են սովորում ամրան երեք ամիսներին, մայրենիով իհարկէ: Օտար լեզուով կրթութիւնն ընդհանրապէս յօրինովի խնդիր է, երբ ասում են. «Դպրոց, դու քո հիմնական գործը՝ երեխայի զարգացումը, մի արա, վերցրու էս խնդիրը լուծի», ռուսական մեծապետականութեան, կամ ամերիկեան, կարեւոր չի: Միթէ դա հայաստանեան դպրոցի խնդիրն է: Այսինքն հասել ենք նրան, որ Կիսելիովը պիտի գայ ու հայ հասարակութեան ու կրթական համակարգի առջեւ խնդի՞ր դնի: Դա տարրական արժանապատուութեան հարց է:

Հանրակրթութիւնը լիքը խնդիրներ ունի, բայց դրանք Կիսելիովի, նրա ներկայացրած պետութեան ու լեզուի հետ կապ չունեն: Եթէ Հայաստանը նորմալ զարգացող երկիր լինէր, պիտի օտար լեզու լինէր ասենք անգլերէնը, եւ Կիսելիովը մեր վարորդի հետ պիտի անգլերէն խօսէր: Ենթադրում եմ գիտի անգլերէն, իսկ եթէ չգիտի, թող սովորի: Բայց հիմա ստացւում է, որ ռուսերէնը պարտադիր օտար լեզու է: Հասկանում եմ, որ օտար լեզուի, այդ թւում անգլերէնի ուսուցման արդիւնաւէտութեան խնդիր կայ, ինչպէս բոլոր առարկաների դէպքում: Դրա համար պիտի մշակուեն նոր մեթոդներ, ուսուցման անհատականութիւն պիտի տեղի ունենայ, երեխան միշտ կիրառի, գործածի իր սովորածը, ճանապարհորդի: Դուք պատկերացրէք, որ մեր երեխաները շատ ճանապարհորդէին, շատ շփուէին, բնականաբար աւելի հեշտ կը սովորէին օտար լեզուներ՝ անգլերէն, ֆրանսերէն, գերմաներէն եւ այլն: Օրինակ, ինչու աւելի լուրջ չենք զբաղւում մեր հարեւան երկրների լեզուներով, ինչու են սպաներէնը, ֆրանսերէնը, գերմաներէնը չպրտւում դուրս: Իսկ ահա ռուսերէնը առաւել քան հիմնաւոր է ներկայացուած հայկական դպրոցում: Բայց արի ու տես, որ դա կարող է Կիսելիովին չբաւարարել. ինչ ունէինք տուել ենք, ու էլի նրանց չի բաւարարում: Էլ ինչ տանք, էլ ուրիշ բան չունենք տալու:

- Ասում են, որ դեռեւս 1988-ի շարժման տարիներին, Հայաստան էր ժամանել Տրապեզնիկով ազգանունով մի ռուս պաշտօնեայ, որը ներկայանում էր հայերի բարեկամ ու քարոզում, որ Հայաստանը հրաժարուի հայերէնից, որ դա լաւ ազդակ կը լինի հայերի համար Ղարաբաղի հարցում, մեզ լաւ աչքով նայելու առումով: Փաստօրէն, կարո՞ղ ենք ասել, որ պատմութիւնը կրկնւում է:

- Ես կարծում եմ, որ մենք պիտի կենտրոնանանք մեր անելիքի ու չարածի վրայ: Հայաստանը մոնոէթնիկ երկիր է, որտեղ 98 տոկոսը հայեր են, եւ այդ դէպքում պետական հանրակրթութեան, դպրոցի ու մանկապարտեզի լեզուն չի կարող հայերէնը չլինել: Այսինքն, եթէ այդ հարցն ի սկզբանէ դրուած լինէր, եթէ Հայաստանում 42 ռուսական դպրոցների անօրինական առկայութիւնը թոյլ տրուած չլինէր, պարզ է, որ խնդիրն էլ լուծուած կը լինէր: Դրանից յետոյ կը դրուէր օտար լեզուի, որպէս առարկայի, ուսուցման տեղի ու դերի հարցը, ռուսերէնն էլ այդ թւում: Թէ չէ ինչ որ Տրապեզնիկովի անունն ես տալիս, մարդ ուզում է ոտքի կանգնել: Ես ոչ Տրապեզնիկով եմ ճանաչում, ոչ էլ Կիսելիով ու չեմ էլ ուզում ճանաչել: Ես հիմա չեմ դիտում ռուսական ալիքներ, ռուսական էստրադա ու շոու կոչուածը տանել չեմ կարողանում, որովհետեւ մենք գիտենք, թէ ինչ կեղտ բերեց այն, գիտենք, թէ ինչ թշնամութիւն է կաթում ռուսական ալիքներից: Հայաստանում թշնամութեան քարոզն արգելուած է, բայց եթերով այն գնում է՝ նոյն ուկրաինացիների կամ ամերիկացիների նկատմամբ: Հիմա ռուսնե՞րը պիտի թելադրեն մեզ, չպրծա՞նք: Բա էլ ինչի՞ համար էր 1991 թուականի անկախութիւնը, վերջը 1991-ին ինչ ենք հիմնադրել: Հարցը մեր մէջ է՝ յանձնելո՞ւ ենք Հայաստանի Հանրապետութիւնը, թէ ոչ. ես ասում եմ՝ ԵՐԲԵՔ:

HayastanInfo.net

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆԻն



Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

# ՁԱՅՆ, ՈՐ ՓՆՏՌՈՒՄ Է ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻ ՍԻՐՏԸ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԸ

*ՄԵԼԱՆԻԱ ԲԱԴԱԼԵԱՆ*



*«Ես միշտ սրտողով եմ վերաբերուել այդ մեծ հային եւ միշտ ուզեցել եմ նրան իմ երախտիքը յայտնել՝ ոչ միայն որպէս մեծ արուեստագէտի, այլեւ հայ մարդու: Ի վերջոյ, դա ինձ յաջողուեց: Նրա ծննդեան 90-ամեակի առթիւ թօղարկուեց նրան նուիրուած իմ սինգլը:*

*Հեռուստատեսութեամբ դիտում էի նրա հետ հարցազրոյցը: Նա մի արկղ էր բերել իր հետ, որտեղ իրեն հասցէագրուած ծրարներ էին: «Սրանք իմ ստացած նամակներն են իմ երկրպագուներից, ասաց նա: Այդ բոլոր նամակներում նրանք ինձնից օգնութիւն են խնդրում: Բայց ոչ մէկի մտքով չէր անցել՝ ինձ պարզապէս շնորհակալութիւն յայտնել՝ իմ ժողովրդին արածներիս համար»: Շառլ Ազնաւուրի հանդէպ համաժողովրդական, համահայկական սէրը պարզ շնորհակալութիւնից այն կողմ է իհարկէ, հայերիս համար մեծ երգչի, արտիստի նրա կերպարը վաղուց ազգային խորհրդանիշ է դարձել: Սակայն լինում են նաեւ այսպիսի պահեր, առաջին հայեացքից փոքր-ինչ տարակուսելի թուացող, բայց մարդկային եւ մտերմիկ մի ցանկութեան, որին գգայնօրէն արձագանգել է հարցազրոյցի գիւմրեցի ունկնդիրը՝ երգչուհի Էմմա Յովհաննիսեանը: «Ես դա սրտիս շատ մօտ ընդունեցի: Եւ որոշեցի այս կերպ նրան իմ շնորհակալութիւնը յայտնել: Այս սինգլը իմ խորին երախտագիտութիւնն է մարդուն, ով բացի հանճարեղ լինելուց, նաեւ հանճարեղ հայ է: Շնորհաւորում եմ, խոնարհւում Ձեր առջեւ», իր մի հարցազրոյցում խոստովանում է երգչուհին: Իր սէրը Շառլ Ազնաւուրի արուեստի, հիացմունքը նրա հանդէպ Էմմա Յովհաննիսեանը արտայայտել է արտիստին ձօնած հեղինակային երգով: Երգը գրուել է վաղուց, իսկ այս տարի Մայիսին, մեծ շանսոնէի ծննդեան 90-ամեակի առիթով վերածուել է սինգլի, որի համար 2014-ին Գիւմրիում անցկացուող «Վերածնունդ» միջազգային փառատօնում Էմմա Յովհաննիսեանը «Հեղինակային երգ» անուանակարգում արժանացել է 1-ին կարգի դափնեկրի կոչման եւ ոսկէ մետալի:*

*Մանկութիւնը լեցուն է եղել երգով: Ընտանիքում՝ դեռ փոքր երեխայ, միշտ լսել է երգ ու երգեցողութիւն, հայրը, ազգականները բնատուր երաժշտական ունակութիւններով էին օժտուած, ինքն էլ մանկուց սիրել է երգն ու երգել է, դպրոցական տարիքում սկսել է նաեւ ստեղծագործել, երգերի տեքստեր ու երաժշտութիւն գրել: Այդ տարիներին բազմաթիւ ելոյթներ է ունեցել քաղաքային, մարզային եւ հանրապետական միջոցառումների եւ փառատօնների ժամանակ, արժանացել պատուոյ գրերի եւ դիպլոմների: Առաջինը երաժիշտը, որ նկատել է նրա տաղանդը Մելիք Մաւիսակալեանն է եղել:*

*Երաժշտական նախնական կրթութիւնը ստացել է Գիւմրու Կարօ Մուրզայի անուան դպրոցի վոկալ բաժնում, աւարտելուց յետոյ սովորել է տեղի երաժշտական ուսումնարանում, ապա Մանկավարժական ինստիտուտում:*

*Որպէս երկրորդ մասնագիտութիւն Էմմա Յովհաննիսեանը ընտրել է հոգեբանութիւնը եւ սա՝ բնաւ ոչ պատահական: Բեմում արտիստի ու հանդիսատեսի միջեւ կապը՝ հանդիսականին զգալն ու երգը նրան ճիշտ հասցնելը իր համար նոյնքան կարեւոր են, որքան ձայնային-տեխնիկական պատրաստուածութիւնը, դրա կատարելագործումը: Եւ մարդկային հոգեբանութեան ճանաչողութիւնն օգնել է այս հարցում: Սա արտիստի համար ակնյայտ իրողութիւն է. իր երգի հասցէատէրը, առաջին գնահատողն ու քննադատը հանդիսատեսն է, որից նաեւ ստեղծագործական իմպուլսներ է նա ստանում: Զուտ ձայնային տուեալներն իր համար բաւարար չեն, նոյնիսկ քիչ են. «Եթէ չկայ հոգի, ինչ արժէք ունի ձայնը», ասում է նա, որովհետեւ ձայնը արժեւորւում, իմաստաւորւում է երգչի ներաշխարհային ապրումների, զգացողութիւնների համադրութեամբ, եւ դա արուեստի հաղորդականութիւնն ապահովող հիմնական նախապայմանն է (պրոֆեսիոնալիզմից յետոյ իհարկէ): Բեմական կեանքի մասնագիտական տեւական փորձը նրան բերել է այն համոզման, որ կատարողական ամենաբարձր վարպետութիւնն անգամ ի զօրու չէ բացել հանդիսականի սիրտը տանող ճանապարհը, եթէ դրան չի մասնակցում, չի հաղորդակցւում արտիստի զգայական աշխարհը, այսինքն հոգին երբ բաց չէ, կապը ունկնդրի հետ լիարժէք չի կարող լինել, կիսատ է: Այս առումով հոգեբանի մասնագիտութիւնից զատ կարեւոր է եղել նաեւ եկեղեցական երգչախմբերի նրա աշխատանքային փորձը, ներքին ձայնի, ներքին հաղորդակցութեան ճանաչողութիւնը:*

*Երկար տարիներ աշխատել է Գիւմրու Սբ. Եօթվերք եւ Սբ. Նշան եկեղեցիների երգչախմբերում, 9 տարի է՝ ղեկավարում է Սբ. Նշան եկեղեցու երգչախումբը, երգել է Գիւմրու ակադեմիական երգչախմբում՝ Ռոբերտ Մլքէյեանի ղեկավարութեամբ:*

*12 տարի աշխատել է Սեպուհ Աբգարեանի ղեկավարած «Գոհար» հանրայայտ երգչախմբում, որի կազմում համերգային շրջագայութիւնների է մեկնել աշխարհի բազմաթիւ երկրներ: Այդ տարիները յատկապէս խորը հետք են թողել նրա հոգում. «Դա մի մեծ ընտանիք է, որի մէջ վերածնուողը հոգեբանօրէն դուրս չի գայ այնտեղից»:*

*Մեներգչուհին է եղել Գիւմրու ռուսական կայազօրի 102-րդ բազայի փողային նուագախմբի: Մասնակցելով Գիւմրիում Ռուսաստանի հիւպատոսարանի եւ Երեւանում Ռուսաստանի դեսպանատան*

*Շար.ը էջ 17*

glendale
Library, Arts & Culture

**Armenian Kesaria/Kayseri and Cappadocia**

**By**

**Prof. Richard G. Hovannisian**




